

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Հանրային բարոյական..... Բ. ԲԷՉԵԱՆ
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Ի մահ՝ Տ. Տ. Ներսիսի, սիրեցեալ Պատրիարքին Հայոց. Ե. Զ.
 ՊԱՏՄԱԿԱՆ. Զինացիք նկարագրեալ յինքեանց (Զէնկ-Քի-Թոնկ).
 Թարգմանութիւն..... Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ
 ՎԷՊ. Թուրքերան կինը. (ԷՄԻՆ ՌԻՇՊՈՒՐԿ) Թարգմանութիւն.....
 ՔԱՂՈՒԱՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻՇ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ..... Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ԳԱԼԱՌՆԵՐՈՒ — տարեկան..... Կէս ոսկի Օսման.
 » » վեցամսեայ..... Բառ » »
 Մէկ թերթին գինն է 60 փարայ
 Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 Ֆրանք
 » » վեցամսեայ..... 6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան..... Դահ. արծ. 15
 Վեցամսեայ » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք եւ Մասիս Երասրաց
 Ղալաթիա, Նորատուրկեան խան



Կ. ՊՈԼԻՍ
 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 9 Նոյեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	110
3 » » » (վճակնին)	109 3/8
3 » Բարի Ի » (պանքային)	22 95
» » » » (վճակնին)	23 2 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոսնոյիստէ

Երեկ երեկոյ գոցուեցաւ.....	դհն.....	8 33
Պորսային գոցուեցին վերջը	» ...	8 33
Բերայի մէջ	» ...	—
Առաւօտուն բացուեցաւ	» ...	8 33
Բարձրագոյնի գին	» ...	8 33 1/2
Նոսաղագոյն	» ...	8 33
Կէս օրին	» ...	8 33
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.).....		69 30
Երեկ իրեկուն գոցուեցաւ		79 27 1/2
Բերայի մէջ		—
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.		69 17 1/2
Կէս օրին		69 17 1/2
Հեվայէսիզ		20
Իէրօր գոնսօլիտէի.....		—
» իւնիֆիէի		—
Փոխառութիւն 1863	Ֆր.	75 30
» 1865	» ...	56 50
» 1869	» ...	50
» 1873	» ...	44
Պոն տիւ Թրէզօր	Անգլ. Լ.ր.	21 50
Բուսէլիի երկաթուղի	Ֆր.	44 50
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	73

ԲԱՅՆԵՏՈՄՍՔ

Սօսիթէ Ժէնէրայ	Անգլ. Լ.ր.	3 30
Քրէտի Ժէնէրայ (Գ. Կ.) ...	Օսմ. Լ.ր.	7 10
Պանք տը Գոնս	» ...	5 25
Սօս. Շանժէ վալէօր	Օսմ. Լ.ր.	3 25
Թրամուէյ	» » ...	285

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր.	100
20 Ֆրանքնոց	» ...	88
Անգլիական ոսկի	» ...	110 22
Բօլ Իմբէրիալ	» ...	90 8
Քրիմէյ	» ...	51 23
Ռուսլի թղթադրամ	» ...	8 88
» արծաթ	» ...	89 30
Ֆիօրին	» ...	9
Մէճ. արծ. (տարբ.).....	» ...	107 39
Վեցնոց	» ...	102 30
Հինգնոց	» ...	102 30
Մէթալիք	» ...	98 20
Պղինձ	» ...	780
Թղթադրամ	» ...	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 20 Նոյեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ	
Անգլ. քոնսոլիտէ գոցուեցաւ	100 1 $\frac{1}{2}$ 16
Օսմն. բացուեցաւ	8 1 8
» » գոցուեցաւ	8 1 8
Օսմն. փոխառութիւն 1865	19 3 8
» » 1869	10
» » 1871	67 1 2
» » 1872	20 1 2
» » 1873	8 3 4
Փոխառութիւն 1877	79 3 4
Պանք Օթօման	13 3 8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	63 1 2
» առանձն. (բրիվիէթիէ)	84 1 2
Տայրա Սանիէ	60 3 4
Տօմանիալ (փոխառ. Բօլիլտ)	83
Հունգարական պարտաթուղթ 1877	102 3 4
Փոխանակութիւն Բարիզի վրայ	—

Վիէննա, 20 Նոյեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	123 20
Օսմանեան երկաթուղի	21 20

Բարիզ, 20 Նոյեմբ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Յրանսական Ռանթ 4 1/2 0/0.....	բաց	108 25
» » 3 0/0.....	բաց	78 75
Օսմանեան քոնսօլիտէ բացուեցաւ		8 22 1/2
» » գոցու. (Գ. Կ.)		8 25
» » 1865		58
» » 1869		49
» » 1873		44
Օսմանեան երկաթուղի		45 25
» Իէթիի բաժնեթուղթ.....		518 75
Պանք Օթօման		591 25
Գրէտի Լիօնէ		522 50
» Ֆօնսիէ.....		1307 50
Բաժնետոմս Լիօնի (գուբ. կոր.)		1222 50
Սուէզի ջրանցք		1903 75
Ռուսական 5 0/0 1877.....		99 1/2
Իսպանական Ռանթ		97 25
Եգիպտական միացեալ գոց		319 37 1/2
Սպանիական (արտաքին).....		59 1/8
Բրիօրիթէ Թիւրք		381 25
5 0/0 Հելլենական		—
Չէք Լոնտրայի վրայ		25 31

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Նոյեմբեր 20 ժ. 10, վ. 30

Յրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	108 32 1/2
Օսմանեան »	8 25
Եգիպտական միացեալ	318 75

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ԴՊ ՏԱՐԻ

1884 ՆՈՅԵՄԲԵՐ 10

ԹԻԼ 3743

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ազգային լրագիրը յաճախ կը խօսին աշխարհի խորքոց վիճակին վրայ : Բայց ուղիղ չէ այս բառերով հասկնալ միայն աշխարհ-լրագիրը : Հայ ժողովրդեան մէջ կան ուրիշ խնդիրներ ալ որք լոկ վարչային չեն : Դիտողութեան արժանի են մանաւանդ կարգ մը խնդիրք որք երբեք ըստ բաւականին ուշադրութիւն չեն դրաւ : Ազգին մասին վիճակին վրայ կը խօսուի երբեմն , և ամեն անգամ նոյն եզրակացութիւնը կը հանուի թէ , մեր ազգային վարժարանք բաղձալի կացութեան մէջ չդառնուելուն պատճառաւ , հայ ժողովրդեան մտային մակարդակը չէ այնչափ բարձր որչափ կը պահանջէ ժամանակիս յառաջդիմութիւնը : Բայց հայ ժողովրդեան քաջայայտ վիճակն : — Ապահով ենք թէ կան այս տողերու ընթերցողաց մէջ շատեր որք քաջայան խնդրոյ մը գոյութեան խի չեն հաւատար : Բայց ստուղիւ հայ ժողովրդեան թէ՛ Պոլսեցի և թէ՛ դաւաճացի մասին ընտանեկան և ընկերային բարուց վերաբերեալ շատ խնդիրներ կան , որք չափազանց անտես առնուած են թէ՛ հայ մամուլին , թէ՛ հայ կղերին և թէ՛ հայ գրագիտաց կամ հեղինակաց կողմէ , որոց ամենքն եւս զանազան աստիճաններով պարտականութիւն ունին զբաղելու այս կարգի խնդրոյք : Ստուգիւ , կ'ըսենք , քննութեան արժանի խնդիր մ'է թէ , արդի քաղաքակրթութիւնն , իւր եւրոպական ուղղութեամբ , ինչ ազդեցութիւն կ'ընէ մեր ժողովրդեան

արեւելեան բարուց վրայ . — ամուսնութեանց , ամուսնաթողութեանց , ամուրի կենաց , զաւակաց ընտանեկան վիճակին վրայ , և , և :

Թէ ինչ բան է բարոյական կամ ոչ , ասոր սահմանը տալ դժուար է : Բարոյագէտ խմատասէրք համարիտ չեն իրենց քննած առարկային քանի մը էական կէտերուն վրայ : Երկու մեծ խնդիրներ տարբեր դպրոցներ բաժնած են Բարոյականի (Մօրալ կամ էթիկ) վրայ խօսող հեղինակներն : Սոցա մէջ առաջին խնդիր մ'է թէ . Ի՞նչ է այն կանոն , կամ էթիկոն , որով խորժ մը համար կ'ըսենք թէ քաջայան է կամ անքաջայան : Երկրորդ մեծ խնդիր մ'է թէ , Մեր խնայական կամ զբաղական ո՞ր կարողութեամբ կը դառնայ ու կը զննենք թէ խորժ մը քաջայան է կամ ոչ : — Խնդրոյն այս լոկ վերացական կողմը կը թողնուի ուրիշ անգամի , կամ լաւ եւս աւելի հմուտ գրիչներու և հեղինակներու կը յղենք մեր այն ընթերցողներ որք բարոյականի այս հետաքրքրաշարժ վիճաբանութեանց տեղեկանալ կ'ուզեն : Հանրային քաջայանի վրայ առաջին յօդուածի մը մէջ , չենք ուղեր այնպէս ցուցնել մեր ընթերցողաց թէ զմեզ զբաղեցնելիք խնդիրը վարդապետական է բոլորովին , և վերաբերութիւն չունի մեր ժողովրդեան գործնական կենաց :

Ընդհակառակն , քիչ խնդիրներ այնչափ իրապէս գործնական կարեւորութիւն ունին , որչափ այն ղեղձմունք որք բարոյական զգացմանց տկարանալէն , կամ բարոյական ճշմարիտ պարտականութեանց չհասկնալէն ծագում կ'առնուն թէ՛ մայրաքաղաքին և թէ՛ դաւաճաց հայ ժողովրդեան մէջ :

Ներսիսյան քաղաքակրթութիւնը միշտ պիտի ունենայ իւր ջատագովներ, և այս ջատագովք շատ պատուական արդիւնքներ պիտի վերագրեն միշտ քաղաքակրթութեան : Բայց այս իրողութիւն արդեւ մը չէ որ քաղաքակրթութիւնն իւր յոռետես քննադատներն եւս ունենայ միշտ, որք պիտի աշխատին ցոյց տալ քաղաքակրթութեան վնասները : Պիտի առարկեն, օրինակի համար, թէ քաղաքակրթութիւնը կարճեցուցած է մարդկային կենաց միջին տեւողութիւնը, և ի մասնաւորի բոլորովին խանգարած է մարդկային սեռին քանի մը դործարաններն, ինչպէս աչքերն և ակունքներն, որոց տկարութիւններն ու ցաւերը քաղաքակրթութեան կը ստորտինք : Պիտի դիտեն թէ քաղաքակրթութիւնն առաւել եւս ընդարձակած է ազգատն հարուստէն անջատող վիճն, և տնտեսական կարգին մէջ եւս՝ ունեցած է իւր յոռի կողմեր, որուն իբրեւ պերճախօս օրինակ պիտի յիշեն քաղաքակրթութեան մեծագոյն կեդրոններուն մէջ տիրող խորին թշուառութիւնն : Աւելի բարձրագոյն կարգի մը մէջ, այս յոռետեսք պիտի փաստաբանեն թէ քաղաքակրթութիւնը մարդուս սրտին մէջ կարգ մը բաղձանքներ զարթուցած է, զորս իրացնելու անկարելիութիւնը կամ դժուարութիւնն յուսահատութիւն կը պատճառէ բազմաց, որք անձնասպանութեամբ վերջ կուտան իրենց կենաց, և թէ, անձնասպանութեան եւս մէկ գէշ պտուղն է քաղաքակրթութիւնը, եւ : Ի վերջոյ, այս յոռետեսք դիտել պիտի տան թէ, քաղաքակրթութիւնն աննպաստ է փոքր ազգութեանց պահպանման, զորս մտային, տնտեսական և նիւթական ոյժերով աւելի զօրաւոր և աւելի մեծ ազգեր կուլ կուտան ազատ մըրցմամբ, և թէ այսպէս Ֆիլիքական, անտեսական, իմացական և քաղաքական կարգերու մէջ, քաղաքակրթութիւնն ունի իւր ապացուցեալ վնասներ :

Մեր պարտքն է անշուշտ զգուշանալ յոռետես լինելէ, երբ քաղաքակրթութեան վրայ խօսինք տակաւին թերակիրթ ժողովրդի մը : Քաղաքակրթութիւնը կրնայ ունենալ իւր վնասներ. անխառն բարիք չկայ աշխարհիս վրայ. վարդն ալ փուշեր ունի : Բայց այս վնասներ որչափ աւելի մեծ կը

լինին, եթէ անոնց դիմադրելու համար ժողովուրդ մը միանգամայն չէ զինուած քաղաքակրթութեան ընծայած զէնքերով : Պատերազմի դաշտին վրայ, քաղաքակրթութիւնն յարձակող կողմին միայն ձեռաց մէջ զէնքեր չէ դրած. նոյնչափ զօրեղ զէնքեր պաշտպանող կողմին ալ տուած է : Այսպէս է անհատական եւ ազգային կենաց կռիւներուն մէջ եւս : Գուցէ մեծ ազգաց մէջ ձուլուելու սահմանուած են փոքր ազգերը. բայց եթէ իրողութիւնները միայն քննենք, կը տեսնենք թէ այդ ձուլման դործողութեան դէմ իրենց ինքնութիւն ամենէն աւելի կը պահեն այն փոքր ազգեր որք ամենէն աւելի քաղաքակրթութեամբ են և հետեւապէս կարող են իմացական և տնտեսական ասպարէզներուն վրայ մրցիլ մեծերուն հետ : Բայց անդին հիւսիսային Ամերիկայի բնիկները բոլորովին կ'անհետին քաղաքակրթութեան առջեւէն : Խնդիրն ուրեմն քաղաքակրթութեան ըստ կարի օգտուելու վրայ է, որ միակ միջոցն է անոր վնասներուն դէմ դնելու :

Եթէ քաղաքակրթութեան մասնաւորապէս մեր հանրային բարուց վրայ ըրած ազդեցութիւնը քննենք, կը տեսնենք թէ այս նկատմամբ եւս անխառն բարիք մը չէ եղած : Քաղաքակրթութեան լաւ կողմերն ալ առած ենք, յոռի կողմերն ալ : Նւրովնետեւ արդի քաղաքակրթութեան պահանջմանց համեմատ կատարելապէս կապակերպեալ կըրթութիւն մը մեր արդի սերունդը չէր պատրաստած նախապէս, քաղաքակրթութեան ազդեցութիւնն զգալի եղած է այնպիսի ժողովուրդի մը վրայ, որ առաւելապէս տրամադիր էր անոր յոռի կողմերն ընդ օրինակելու, քան լաւ կողմերն իւրացնելու : Այս երեւոյթ լոկ հայ ժողովրդեան յատուկ չէ : Մեր պայմանաց մէջ գտնուող ամեն ժողովրդոց վրայ քաղաքակրթութեան հետեւանքն այսպէս միակողմանի եղած է :

* * *

Այս նախնական գիտողութիւններէ յետոյ, կը ձեռնարկենք նշանակել մի քանի իրողութիւններ, որք դործնականապէս կ'ապացուցանեն թէ մեր ժողովրդեան բարոյական վիճակը չէ այնչափ գոհացուցիչ որ անտարբեր կարենանք լինել բարոյական խնդիրներու :

Ա. Բարոյական պարտաւորութիւնը ըստ մեծի մասին հիմնեալ են օգտակարութեան վրայ: Բարոյականութեան շատ մը կանոններ ուղղակի օգտակար են հանրային առողջութեան, և փոխադարձապէս, անբարոյականութեան շատ արարք խանգարիչ են հասարակաց առողջութեան:

Մտահոգութիւն ազդելու չափ ծանր երեւոյթ ստացած իրողութիւն մ'է թէ, հաշտեալ ախար զարհուրելի յառաջդիմութիւն կ'ընէ Թուրքիոյ ժողովրդոց, մանաւանդ գաւառացւոց մէջ: Թուրք լրագրեր ստիպողապէս ուշադրութիւն կը հրաւիրեն այս դժբախտութեան վրայ, և ծանուցանելով թէ Անատոլիոյ բնակչաց 100ին մինչև 20ը վարակեալ է այս նոզկալի ախտիւ, կը նկարագրեն այն Ֆիլիքական ապականութիւն որ այսու կը արբէ ժողովրդեան և նոր սերնդոց վրայ: Խնդիրը թէ՛ բարոյական և թէ՛ առողջապահական կողմ մ'ունի: Բարոյական կողմին վրայ պէտք է դիտել թէ, ամեն տարի հազարներով Կ. Պոլիս եկող պանդուխտներէն շատեր այս մեծ մայրաքաղաքի մէջ կը վարեն անբարոյական կեանք մը, և երբ հայրենիք կը վերադառնան, այս անբարոյականութեան և անոր Ֆիլիքական տեղերութեանց հետքերն ի միասին կը տանին և կը տարածեն բնիկ ժողովրդեան մէջ: Կիլիկիոյ հայաբնակ կեդրոններուն մէջ մանաւանդ, ականատես դիտողներու վկայութեան նախելով, սարսափելի յառաջդիմութիւններ կ'ընէ այս ախտ: Եթէ կառավարութեան անկէ առողջապահական միջոցներ ձեռք առնուլ այս ապականիչ ախտի ծաւալումն արգիլելու համար, ժողովրդեան բարոյական իշխանութեանց կը վերաբերի ներդրածել հասարակաց խղճին վրայ, և զգուշացնել զայնս այնպիսի վեղձումներէ որք ո'չ միայն առողջութեան այլ նաեւ բարոյականի տարրական կանոնաց հակառակ են:

*
* * *

Բ. Հաճնոյ բռնի ամուսնութեան խնդիրն ուշադրութիւն հրաւիրեց մանաւանդ գաւառացւոց մէջ դիտուած կարդ մը վեղձումներու վրայ, որք ամուսնութեան բարոյական նշանակութեան թիւր ըմբռնումէն ծագում կ'առնուն: Անշափահաս տղաքներ նշանել, կամ շափահասներ ամուսնացնել առանց ի հաշիւ առնելու երկու կողմին զգացումները, վեղձում մ'է որ ամուսնութեան բարոյական

նշանակութիւնը կը փնտցնէ և թշուառ ընտանիքներու թիւը կ'աւելցնէ (*): Հաղուադէպ է որ՝ վեղձում մը դործելու և ապա զայն սքօղելու դիւրութիւն ունեցող տեղացի բռնաւորներ դեր մը խաղան այս խնդրոց մէջ, և Հաճնոյ բռնի ամուսնութեան խնդիրն ա'յն պատճառաւ կարեւորութիւն ստացաւ, որովհետեւ կը կրէր այս հաղուադէպ հանդամներ: Բայց աւելի սովորաբար, ծնողքներ և երբեմն նոյն իսկ ամուսնացողք կարի հակամէտ են ժողովրդին անտես ընելու ամուսնութեան բարոյական մասն, ա'յն մասն որ երկու

(*) Հայ վկայասաններու համար ո՛րչափ բեղմնաւոր նիւթ մը կ'ընծայեն այս ամուսնական վեղձումներ: Այնպէս Վէպերը փոխանակ բարքերն ապականելու, ընդհակառակն ամենէն զօրաւոր միջոցն են բարուց վրայ փրկարար ներդրածութիւն մ'ընելու, ի վեր հանելով սովորութիւն դարձած վեղձումներու տեղութիւններն ու պատճառած թշուառութիւններն և ընդհակառակն ճշմարիտ սիրոյ և ներդաշնակ միութեանց հրապոյրներն: Խնդիրը գրելու կերպին վրայ է միայն: Անճարակ վիսպասան, ում կը պակսին բարձր ներշնչումներ, խողի մը պէս չի կրնար իւր քիթը վեր հանել աղտոտութեանց մէջէն, և ընթերցողներ կը յուսայ գտնել՝ ամբոխին ամենէն անխոտովանելի բնազդումներուն միայն կոչում ընելով: Բայց ամեն վիսպասան այնպէս չէ: Եթէ Հայ ժողովրդեան հրամցուած վէպերն Հայոց ընկերային կեանքէն առնուած լինին, առաւել ուղղապէս կ'արտադրեն բարի ներդրածութիւն մը, մինչ եւրոպական կեանքէն առնուած վէպերը դիւրաւ տեղի կ'ուտան թիւր ըմբռնումներու, և շատ անգամ աւելի վնասակար քան օգտակար ազդեցութիւն կ'ունենան: Հայ ժողովրդին աւելի կ'օգտուէր եթէ փոխանակ տասը թարգմանիչներու, որք Ֆրանսերէն ամեն տեսակ վէպեր կը թարգմանեն իրեն չարունակ, արտադրէր միակ վիսպասան մը, որ ուսումնասիրած լինէր Հայ ընկերութեան գաւառան դասերն ու երեւոյթներն, և հրապուրէր ժողովրդին գրուած վէպերու: Ուրիշ ամեն նկատմամբ, թարգմանութիւնը աւելի օգտակար են մեր ժողովրդեան. զի գիտութիւնն ազդ չունի: Բայց սովորութիւնը, բարք, նախապաշարմունք որք վէպերու նիւթը կը կազմեն, տեղական են, տարբեր են ժողովրդէ ի ժողովուրդ, և Հայ ժողովուրդին իրաւունք ունի պահանջելու որ իւր ընթերցանութեան ներկայացեալ վէպեր իւր կեանքէն առնուած լինին:

կողմանց վրայ փոխադարձ պարտաւորութիւններ կը գնէ իբրեւ հաւատարիմ ամուսիններ ապրելու և գաւաիներ կրթելու համար։ Ամուսնութիւնը քանի կ'երթայ նիւթական խնդիր մը կը դառնայ, չահագլտութեան նիւթ մը՝ գաւառաց մէջ ծնողաց համար և Կ. Պոլսոյ մէջ ամուսնանալու որոշում տուող երիտասարդաց համար։ Շատ իրաւունք չունինք ծաղրելու գաւառացւոց պաշտօնները, որուն շարունակութիւնը պէտք է համարել մեր քրիստոնեայն։ Ամուսնութեան բուն նշանակութեան այսպէս տակաւ տեսութեանէ վրիպելն, և տարբեր տեսութեամբք կնքուած ամուսնութեանց պատճառաւ թըշուառ կամ անկարգ ընտանիքներու թուոյն աճումն՝ հայ ընկերութեան մանաւանդ ապագային համար ծանր խնդիր մը կը պատրաստէ, որ ուշադրութեան արժանի է։ Բայց եթէ զեղծումներ կան, որք հասարակաց խղճին վրայ ներդրածելով և բարուց ու սովորութեանց մէջ բարեփոխում մը յառաջ բերելով միայն կրնան անհետիլ, ուրիշ տեսակ զեղծումներ ազդային և կրօնային իշխանութեանց ձեռամբ ուղղակի կրնան արգելուիլ։ Այս կարգէ են՝ Հաճնոյ բռնի ամուսնութեան նման դէպքեր։ Ապահով ենք թէ մէն մի գաւառային կեդրոնի մէջ իւր սլաշտօնն ու պարտականութիւնները լաւ ըմբռնող միակ եկեղեցական մը կարող է արգելել այս տեսակ զեղծումներ։ Արդէն դոհութեամբ կը տեսնենք թէ Հաճնոյ խնդիրն անուղղակի մեծ օգուտ մ'ընծայած է, թէ՛ Փոքր Ասիոյ և թէ՛ Կաւկասոյ գաւառաց մէջ ուշադրութիւն դարձնելով այն տեսակ կարծեցեալ ամուսնութեանց վրայ որք կը կնքուին երկու կողմերէ միոյն կամքը բռնաբարելով, և փրկարար երկիւղ մը ներշնչելով անոնց որք Հաճնոյ խմբակին անորակելի ընթացից հետեւել կ'ուզէին։ Ա. Բեյքը Ժալէօս է պէն։ Չարիքէն ալ բարիք կրնայ ծնիլ։

Գ. Կրօնական գիտցանք օրհարանալն աննպատակ ներդրութիւն մը կ'ընէ մեր նոր սերնդեան մի մեծ մասին վրայ, որ կրթական ի հարկէ թերի փնտրելի մէջ, ուրիշ նուիրադրութիւն մը չի տեսներ բարոյական պարտաւորութեանց համար, զորս այլ եւս առանց խղճահարութեան անտես կ'ընէ։ Այսպիսի զեղծումներ որոցմէ նախորդ սերունդներ պիտի

խորշէին իբրեւ բարեկրօն և բարեպաշտ անձանց անվայել, համարձակ կը դործուին այժմ։ Այսպիսի փափուկ նիւթի մը վրայ, և այնպիսի թերթի մը մէջ որ առհասարակ կը կարդացուի ընտանեաց մէջ, կարելի չէ ամեն ինչ Լիւլ Զուլայի ոճով գրել։ Մեր ընթերցողաց անձնական փորձառութիւնն ու յիշողութիւնն եւս կրնանք օգնութեան կոչել երբ կ'անարկենք նոր սերնդեան յատուկ կարգ մը զեղծումներու, որք կրօնաշին և բարոյական զգացմանց ի միասին թուլնալէն ծագում կ'առնուն։ Այն խնդիր թէ բարոյականն ո՞ր աստիճան կապակցութիւն ունի կրօնի հետ, կամ թէ բնաւ կապակցութիւն ունի՞ արդեօք, մեր սահմանէն դուրս է։ Առարկութիւն մը չէ նաեւ յիշեցնել թէ անկրօն մարդիկ կան Մարտիոյ մէջ որք շատ լաւ բարոյականի տէր են։ Կարեւոր կէտն այն է թէ, մեր խօսք դաս մը մարդոց վրայ է որոց համար կրօնն էր բարոյականի նուիրադրութիւն։ Այս իրողութիւն անփոփոխ է։ Ինչ որ, շատ աւելի զարգացած ընկերութեան մը մէջ, հասարակ բարեկրթութիւնը պարտ պիտի դընէր, արեւելեան ընկերութեան մը մէջ կրօնային զգացումներն են որ պարտ կը դնեն զայն։ Մեր պատուական բարեկամ Տ. Նորայր, Ստոքհոլմէ գրուած կարգ մը նամակներու մէջ որք բնաւ չափաւ մոռցուին, կը խօսէր Շուէտի մայրաքաղաքին բնակչաց բարեկրթութեան վրայ, և կը պատմէր թէ իրարու անծանօթ երիտասարդ մ'ե օրիորդ մը կրնան մինակ շրջադայիլ անտառներու մէջ, կամ լճերու վրայ նաւարկել զուարճութեան համար, և թէ ծնողք բնաւ անպատեհութիւն չեն տեսներ այս սերտ յարաբերութեանց մէջ, որք ըստ ամենայնի անսկզբ են։ Կը պատմէր նաեւ թէ Շուէտի բաղանջաց մէջ կանայք կը սպասաւորեն արանց, և արք ու կանայք ի միասին կը լուացուին, և դիտել կուտար թէ արեւելեան գաղափարաց ո՞րչափ հակառակ պիտի թուէր երկու սեռերուն այս անխափ հաղորդակցութիւն։ Եթէ բարոյականութիւնն այսչափ բարձր աստիճանի մը վրայ կը սահուի եւրոպական մայրաքաղաքի մը մէջ, անշուշտ բարեկրթութեան արդիւնք է։ Փոքր Ասիոյ մէջ անկիւնն ալ կրնայ դեռ գտնուիլ սիրտերու այնպիսի մաքրութիւն մը, որոց շնորհիւ երկու սեռերու

նոյնչափ մօտաւոր հաղորդակցութիւն մը նոյնչափ զերծ լինի անպատեհութիւններէ։ Աստ եւս կրօնային զգացման արդիւնք է։ Բայց երբ կը տեսնենք նոր սերունդ մը, որ կորուսած է այս կրօնային զգացում՝ առանց շահելու այդ բարեկրթութիւն, ո՞չ ապաքէն մեր առջեւ կը ներկայանայ խնդիր մը, որոյ լուծումը չենք կրնար գտնել կրօնի և բարոյականի անջատութեան վերաբերեալ արդի խնայողութեան կարծեաց մէջ։ Հասարակ ողջմտութիւն մը պիտի հաստատէր թէ, եթէ բան մը վերցունենք և անոր տեղ ուրիշ բան մը չգնենք, դատարկութիւն մը կը մնայ։ Դատարկութիւն մը կայ արդ մեր երիտասարդութեան մէկ մասին սրտին մէջ, և կը կարծենք մէկ մեծ մասին սրտին մէջ։ Այս դատարկութիւն կ'անդրադառնայ նոյն երիտասարդութեան վարուց ու բարուց մէջ, ինչպէս բնական է։ Շատ ճշմարտութիւն կար ընկերավարութեան աճման վրայ Լոնտոնի մեծ թերթի մը խօսքին մէջ, զոր Աբե-է-է թարգմանած էր անցեալ օր, թէ․ «Կրնան մարդիկ գտնուիլ որք կարծեն թէ բան մը չեն կորուսաներ երբ կը կորուսանեն կրօնային հաստատքը․ բայց շատ բնութեանց համար, հաւատոյ չիճում ուրիշ բազում բաներու եւս չիճում կը նշանակէ»։ Սպասելով որ Ստոքհոլմի երանելի բնակչաց բարեկրթութիւնը մեր մէջ եւս մուտ գտնէ, չափազանցութիւն մ'ըրած չենք լինիլ կարծելով թէ կրօնային զգացմանց արագապէս նուազումն ու տկարացումն, որ ակներեւ է մեր նոր սերնդեան մէջ, բարոյական շատ անպատեհութիւններ ի հանդէս բերել կոչուած է։ Նկեղեցականներու և դատարարականներու խորին հոգածութեան արժանի կէտ մ'է այս։

*
* *

Դ. Ընթանէիս հարբերու քաղաքն աննըպատ երեւոյթ մ'է մեր հանրային բարոյականի մասին։ Դատաստանական խորհրդոյ գործերը տարուէ տարի կը շատնան և կը կնճռոտին։ Թերութիւն մ'է որ Դատաստանական խորհուրդն համարատուութիւն չընեն․ այսինքն՝ Ազգին հաշիւ չի տար թէ տարին որչափ դատեր կը ներկայանան իւրեն, ինչպիսի խնդրոց կը վերաբերին, որչափը կը լուծուին և որչափը կը թողուին յաջորդ տարւոյն։ Դատական իշխանութիւնը ամենուրեք սուրբ են սակայն տա-

րեկան այսպիսի վիճակադիր մը հրատարակել, որ ունի իւր մասնաւոր նշանակութիւն, մանաւանդ երբ ինչպէս մեր մէջ՝ այդ դատական իշխանութեան իրաւասութիւնը կը տարածի ամուսնական և ընտանեկան վեճերու վրայ, և միայն ասոնց վրայ։ «Պաշտօնական դրութեան» օրով, երբ Ազնաւուր էֆենտի Դատական Խորհրդական էր, այսպիսի դատական վիճակադրոյ մը պատրաստութեան և հրատարակման սկզբնաւորութիւն եղաւ, որուն չարտադրուելուց ցաւալի է․ զի տեղեկութեան կարեւոր աղբիւրէ մը կը զրկէ զմեզ։

Թէեւ դատական վիճակադիր մը չունենանք ի ձեռին, բայց մեր մասնաւոր տեղեկութիւնը կը ներեն հաստատել թէ, փոխադարձ լքումներու և անհաստատութեան դէպքերու պատճառաւ ամուսնական դատերն աւելնալու վրայ են, մինչ միւս կողմէ ամուսնութիւնը կը նուազին տարուէ տարի։ Մեր հարց օրով, երիտասարդ մը որ կ'ամուսնանար՝ իւր կիներ միայն կ'ունենար։ Ժամանակիս մէկ նորաձեւութիւնն է սակայն որ ամուսնանալէ և պաշտօնական կին մ'ունենալէ ետքն ալ կարգ մը անձինք ուրիշ ընկերակիներ կ'եւս պահեն։ Նոյն դիտողութիւն նաեւ մանկամարդ կանանց համար, որք երբ քիչ մը թեթեւաբարոյ են, — և կարծողներ կան թէ թեթեւաբարոյութիւնն ևս քաղաքակրթութեան մէկ նոր ձեւն է միայն, — մէկէ աւելի ընկերներու հետ ժամանակ անցունելու մէջ անպատեհութիւն չեն նշմարեր։ Եւ այս, որչափ ալ ցաւալի, զարմանալի չէ սակայն․ զի, որպէս նախընթաց հատուածի մը մէջ դիտել տուինք, շատ անգամ ամուսնութիւնը կը չեղի իւր բուն նպատակէ, եւ պարզ շահադիտութիւն մը կը դառնայ։ Այս պայմանաց մէջ, ամուսնութիւնն անկեղծօրէն կնքուած չլինելով, անոր շարունակութեան մէջ եւս անկեղծութիւն չի կրնար տեսնուիլ։ Յիշաւի, այսօր ամեն ժամանակէ աւելի կը խօսուի «էրոյ» վրայ․ զգացումներու ուսումնասիրութիւնը տարուած է իւր ծայրագոյն սահմաններ․ սրտին անդամազնութիւնը կատարելութեան հասած է․ հոգեբանութիւնն յոյժ մշակուած է։ Բայց այս զգացմանց և ուսումնասիրութեանց արտայայտութիւնը վէպերու հատորներէն

դուրս չեն ելներ : իրական կեանքի մէջ, ճշմարիտ սէրն ևս քան զևս նուազագոյն տեղ մը կը բռնէ , և բնական յարմարութեան վրայ հիմնեալ ամուսնութեանց համեմատութիւնը խոնարհագոյն կը մնայ բազդատմամբ ա՛յն ամուսնութեանց, որք կը կնքուին ամուսնութեան ճշմարիտ նպատակներէն օտար նկատումներով : Աւելորդ է օրինակներով բացատրել չարիք մը , որ ա՛յնքան իրական է որչափ՝ կարծենք՝ հանրածանօթ : Մեր երկտառարդաց մէջ մաս մը կայ , և այս մաս տարուէ տարի կ'աւելնայ , որ սիրային ասպարէզին վրայ քաջագործութեան բազում փորձեր տալէն , վերքեր ստանալէն և վէրքեր պատճառելէն , հաճոյից ու զուարճութեանց ժամանակը գրէթէ անցունելէն , և իւր Ֆիզիքական , խնայական և զգացական ոյժերն այս առաջին շահատակութեանց մէջ գրէթէ սպառելէն յետոյ , կ'ամուսնանայ , ո՛չ այնչափ սիրոյ զգացմամբ , զոր արդէն բթացուցած է դուցէ , որչափ այս երկտառարդական առաջին անխնայութեանց մէջ խանգարեալ ելեմուտքը քիչ մը կարգի դնելու ակնկալութեամբ : Գեղեցիկ սեռին զեռահաս ներկայացուցիչք ամուսնացեալ վիճակէն յետոյ ո՛րչափ ալ ետ չմնան այրերէն , այդ վիճակէ առաջ այնքան ազատութիւններ չեն վայելեր սովորաբար : Բայց ո՛րչափ նախապաշարեալ ենք : Ո՛չ ապաքէն երկու սեռերն հաւասար են ըստ ամենայնի : Մեր «բաւագոյն կիսուն» կողմէ պերճախօս ճայներ ո՛չ ապաքէն լիակատար հաւասարութիւն կը պահանջեն գեղեցիկ սեռին համար : Եւ չխաղանք հաւասարութիւն բառին հետ , որ կը նշանակէ՝ գեղձունները գեղձուններով փոխարինելու և բարիքը բարիքով փոխարինելու կարողութիւն : Հետեւապէս , միտում մը կ'երեւի՝ երկտառարդութեան տեղը մասին վայելած ազատութիւնները վայելել տալու նաեւ գեղեցիկ մասին : Այսու բարուց խանգարումը քայլ մ'եւս կրնայ յառաջանալ . բայց կարեւոր սկզբունք մը կը վերկուի : Որչափ խելացի էին Ֆրանսացի և ամերիկացիներն երբ կը դռնէին . «Ապրի՛ն սկզբունքները , կորսուին դադրեալանութիւններն» : Եւ մեք որ , փա՛նք Աստուծոյ , բանով մը ետ չենք մնար Ֆրանսացիներէն , ընդէ՞ր ի հարկին չգոհենք ընտանեկան կենաց անմեղութիւնն ու մաքրու-

թիւնն իսկ այնպիսի երեւելի սկզբանց , ինչպէս են հանանց ազատագրութիւն , հասարակութիւն խելան սեռի ընդ առաւելին , և այլն :

Այո՛ , բարեմիտ ջատագովներու ամեն քարոզութեանց հակառակ , դժբախտ իրողութիւնն այն է թէ , այս խոշոր բառեր , որք ո՛չ ամեն տեղ ո՛չ ալ ամեն բերնի մէջ նոյն իմաստն ունին , աւելի կը ծառայեն ընկերութեան կենսական սկզբանց վրայ գաղափարները չփոթելու . քան միտքերը լուսաւորելու , և հետեւապէս , բարուց վրայ եւս լաւ աղդեցութիւն մ'ընելէ աւելի յոռեգոյն տպաւորութիւն մը յառաջ բերել կը միտին , գէթ առ այժմ : Ասոր հետեւանքները կը պարզուին Գատատանական խորհրդոյ առջեւ , որ քիչ մը փորձառութիւն ունի ստացած այդ մեծամեծ սկզբանց գործնական կողմերուն վրայ , որք նուազ հետաքրքրաշարժ չեն , ո՛չ ալ , դժբախտապէս , նուազ ծանրակշիռ : — Բայց կանգ առնունք աստ : Մեր կը կարծենք թէ այս առաջին յօդուածով ըսինք այնչափ բան որչափ հարկաւոր էր զգացնելու համար թէ , Հանրայն Բարոյականի վերաբերեալ խնդիրներ կ'ընան զրաւել մեր ուշադրութիւն և պա՛րտին դրաւել :

Բ. ՔԵՉԵԱՆ

Ի ՄԱՀ

Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍԻՐԵՑԵԱԼ ՊԱՏՐԻՍՏՐԻ ՀԱՅՈՑ

Գաղբէ՛ , ո՛ր քնար , հեշտ նուազներ երգելէ ,
 Նուրբ թելերուդ սեւ սեւ նոճիք ուրբէ .
 Եւ դու , Մուսայդ , երկնադեցիկ դիցունհի ,
 Թո՛ղ լուսարձակ քո հանդերձներ , ա՛ռ սեւ քօղ ,
 Ե՛կ արտասուել յայս ցուրտ հող :
 Ո՛հ , գիտե՞ս ո՞վ հանգչի այն տեղ անմեղունջ .
 Գիտե՞ս ում է այդ գերեզման անշունջ ,
 Գիտե՞ս ինչու ամբողջ ազգ մը վշտակիւ
 Անմխիթար կայ ընկղմալ ի խոր սուգ .
 Ու թափէ ջերմ արտասուք :
 Մեծափարթամ իշխան մը չ'է նա արի ,
 Յաղթող անթիւ պատերազմաց կատաղի ,
 Որ զիւր փառաց դափնիս լուաց արիւնով .
 Ոչ խորագետ մի նախարար պերճաբան
 Ում կայ աշխարհ գովարան :

Այլ փրկաստի զաւակ մ'է նա ճշմարիտ,
Մի մոլորեալ հօտոյ հովիւ ուղղամիտ,
Վարդապետ մ'է, միջնորդ մարդկանս Աստուծոյ
Հայրապետ մ'է, նախատակ մ'է սրբանուէր

Որ կը կոչէ առ ինք Տէր :

Ո՛հ, ալ գոցուած է իւր դադաղ, մահացուք,
Դադրեցուցէ՛ք ձեր ազադակք չարաշուկ .
Ա՛լ չի լըսեր նա զանարգանս ձեր գծուծ,
Ա՛լ անշունչ է բերանն այն սուրբ կարեւէր

Որ զթշնամիս իւր օրհնէր :

Զբաբախեր յայսմ հետէ սիրտն այն ոսկի,
Որ զփառս ունայն սրհամարհէր աշխարհի,
Ու մ'յանդիման շողշողային լուսարձակ
Ճշմարտութիւն, հաւատք, յոյս սէր անմահին

Զոր վայելէ արդ յերկին :

Խոնարհութիւն, նշանաբանն էր հոգւոյն,
Խոնարհութիւն, այս էր պատուէրն Աստուծոյն .
Հպարտ գլուխք երբ իրեն դէմ ժողովքէին,
Խոնարհութիւն լաղ ուսուցած էր նորա

Ներել մարդկանց անուղղայ :

Ինչու, Աստուծո՛, այնքան կանուխ ո՛հ քեզ մօտ
Կանչեցիր զայն հովիւ փառաց քոց կարօտ,
Ե՞ր զառաջնորդն մեր անման կորզեցեր .
Եւ իրեւ նաւ ու մ' նուազիղ կորնչի

Նոյն իսկ պահու՛, փոթորկի,

Ալեկոծեալ կոհակներու ըստ քմաց
Նա տարուբեր կը տատանի ջախջախուած,
Եւ ամեն հողմ՝ որ կը փռէ հակառակ
Ո՛հ, կ'ապառնայ խորասուզել զայն իսկոյն

Ի խաւար վիհս անդնդոցն :

Իբր Որփէոս որ անդր ի խորս դժոխոց
Ամբեց սեւա ոգիս ի ձայն իւր երգոց,
Փաղցրանուագ օրհնեղութեանց ի մըմունջ
Պիտ՝ գոչէի հեծեծանօք աղեկէլ

«Ո՛հ շընորհէ մեզ Ներսէս :»

Այլ անգուլթ է յաւերժ պատգամն երկնային,
Եւ հրեշտակներն որ զինն ի վեր կը տանին
Լուսացնող ամպոց մեջէն խուռնեալ
Չեն ձգեր գէթ մի գթալից հայեցուած

Ի ժողովուրդս ձեռնամուծ :

Եւ ո՛ր գիտէ, միթէ պատիր յոյս աշխարհ
Յանկալի՞ է առաքինւոյն կեանս երկար,
Միթէ մահուան ստուերազգեաց ի ցուրտ վէմ
Հեռի նախանձ խառնազանձէն, միայնիկ,

Չէ՞ նա բիւրիցս երջանիկ :

Երբ անթառամ կապտեալ նարօտս ի ճակտին
Աստուածընտիր խոնարհ գլուխն ի յերկին
Թեւաքօղեալ միշտ դէպ ի վեր ճախրելով
Մըտնէ ի գող լուսածաւալ յայն սրահ

Ուր հրեշտակաց իսկ է ահ :

Զքնա՛ղ ոգին անմահութեամբ պատարուն
Ուր ոչ եւս են գաղտնիք վրսեմն ու անհուն,
Յաւիտենից փառօք ծածկեալ, ի վերուստ
Խոնարհեցով մերթ յանդոյս գունտս այս յերկիր

Պիտ՝ հսկէ մեզ կարեկիր :

Ե. Չ.

ԶԻՆԱՑԻՓ

Ն ԿԱՐԱԳՐԵԱԼ ՅԻՆՔԵԱՆՑ

Ի ԶԵՆԻՒՄԻՍԻՍԻՍ ԲՆԴԱՅԵՐԷ

ԶԻՆԱՏԱՐԿԱՆ ԿԵՐԵՒԷ ԶԻՆԱՏԱՐԿԱՆ Ի ՓԱՐԵՂ

ԱՄՈՒՍԵԱԹՈՂՈՒԹԻՒՆ

Կայ Զինատանի մէջ, բայց բացառիկ
եղանակաւ : Ըսի թէ ամուսնութիւնն ան-
լուծանելի կապ մը կը կազմէ ընտանեկան
տեսակէտով : Օրէնսդիրը միայն բացառիկ
տրամադրութիւն մը մտցուցած է՝ նոյն իսկ
ընտանեաց շահուն համար : Ճշմարիտն ըսե-
լով, ամուսնաթողութիւնն օրինական հարկ
մ'է :

Ընթերցողը թող չխնայէ աստ նպաս-
տաւոր կամ հակառակ փաստաբանութիւն
մ'ամուսնաթողական օրինաց վրայ : Ես ո՛չ
Ալեքսանդր Տիւմայի հետ միջում ունիմ, ո՛չ
Պ. Նաքէի հետ : Կը պատմեմ ինչ որ կը խոր-
հինք մեք Զինատանի մէջ ամուսնաթողու-
թեան վրայ . հետեւաբար չեմ կրնար ըսել
թէ ինչ պիտի խորհէինք եթէ ընտանիքն
այնպէս կազմաւորեալ լինէր Զինատանի մէջ,
ինչպէս կազմաւորեալ է արեւմտեան ազ-
գաց մէջ :

Օրէնքներ կը չինուին ընկերութեանց
համար, քանի որ ձեւափոխին այդ ընկերու-
թիւնը : Օրէնքներն այդ շրջափոխումները կը
նշանակեն : Ուրեմն կրնայ լինիլ որ օրէնքա-
գիրք ժամանակը բարեպատեհ գտնեն ա-
մուսնաթողութիւն մտցնելու . շատ հաւա-
նական է այս, բայց վորձն ըրած չեմ :

Գիտցածս այս է որ բրիտոնեական թը-
ւականէն 283 տարի առաջ, երբ մեր օրի-
նադիրքն հրատարակեցաւ, ամուսնաթողու-
թիւն կար Զինատանի մէջ : Ե՞րբ հաստատ-
ուած է իբրեւ օրէնք, պատասխանը միայն
է : Բայց Վոլթէր կ'ուսուցանէ մեզ բարե-
բաղդաբար . «Ամուսնաթողութիւնն ամուս-
նութեան ժամանակակից է գրեթէ . կը կար-
ծեմ թէ ամուսնութիւնը քանի մը շաբաթ
աւելի հին է :» Խեղճ ամեն բանի կը յաղ-
թէ միշտ :

Ինչ որ ալ լինի ամուսնաթողութեան
ճիշդ տարիքը, թեթեւակի սահմանուած
չէ, և օրինադրքին մէջ մտած է այնպիսի
սահմանողականով մը, որ լուրջ միջոց մը կ'ը-

նէ զայն : Օրէնքն ինչ ինչ պարագայներ նախատեսած է , զորս անօգուտ է յիշել աստ , և որք ամեն ամուսնացեալ անձանց մոքին մէջ են : Այս կէտի վրայ Արեւելք և Արեւմուտք սքանչելապէս կը համաձայնին : Բայց մեր մէջ այլանդակութիւն մը կայ : Մեր երկու պարագայ ունինք ամուսնաթողութեան , որք անտիպ են Ներսիսի մէջ : Մին է անհնազանդութիւն՝ մղեալ մինչեւ ի թշնամանութիւն ընդդէմ ծնողաց մի կամ միւս ամուսնոյն , երկրորդն է ամուսնաթողութիւն՝ մինչեւ օրինօք որոշեալ հասակ մը :

Այս սկզբունքը կրնան տարօրինակ թուիլ , չեմ ժխտեր . բայց երբոր յիշուի մեր ընտանեկան կազմաւորութիւնն ըստ այն սկզբանց զորս արդէն ծանուցի , կը հասկցուի այդ երկու մասնաւոր պարագայից պատճառը : Կը հաստատեն այն կարծիքը զոր յայտնեցի այն ընկերական դերին վրայ , զոր ունի ընտանիքը չինական ընկերութեան մէջ :

Այս ամեն դիտողութիւնք նախաշաւիղներ են միայն : Ամուսնաթողութեան մասին ամենէն շահեկան խնդիրն է գիտնալ թէ յաճախ կը գործածուի : Դէմն ելնող ամեն անձինք , որ մեր բարուց և սովորութեանց վրայ տեղեկութիւն խնդրած են ինձմէ , սա հարցումն ըրած են միշտ . « Շատ ամուսնաթողութիւն կայ Զինաստանի մէջ » : Առաջին անգամ զարմացուց ինձ այս հարցում , բայց յետոյ խորհելով հասկցայ թէ արդարեւ գիտնալու արժանի միակ բանն էր : Երբոր առաջին անգամ ցաւը կը հարկադրէ ձեզ ատամնարուծին երթալ , կը հարցնէք ձեր բարեկամաց թէ քաջել տուած ժամանակ շատ կը ցաւի : Անծանօթին երկիւղն ունիք : Ամուսնաթողութեան համար ալ գրեթէ այսպէս է : Երկիւղ կայ , և այս պատճառաւ կը հարցուի մեզ թէ « Ամուսնաթողութիւն շատ կայ ձեր երկրին մէջ » : Քաջալերուեցէ՛ք , ո՛ր երկչոտ և պարզ մոքեր :

Ամուսնաթողութիւնն երեւցածին չափ տարալիւի է : Ձեր երկիւղն առաւել զարհուրելի կընէ զայն ճիշադի պէս , մինչ բաւական է՝ ոչնչացնելու համար այնպէս ընել որ դեռն հիւսնդանքն աւելի քէլ լինի : Ահա այս է անոր ճշմարիտ սահմանը Զինաստանի մէջ : Կը բաւէ որ կրնայ օգտակար լինիլ , որպէս զի իւր ներկայութիւնն արդարանայ : Բայց հարկաւոր չարեաց սկզբնական մեղքն

ունի , որովհետեւ մարդկային անկատարելութեան վկայութիւն մ'է , և ամուսնութեան մէջ մեր տեսած հրապոյրը կը բեկանէ , այն է երկու ընտանեաց մէջ առաջարկեալ և կնքեալ միութիւնն :

Ամուսնաթողութեան միակ կարեւոր պարագայն , ի բաց առեալ շնութիւնը՝ զոր այլը տիրաբար կը պատժէ իւր ձեռօք , ամուսնինն է , որովհետեւ ամուսնութեան նպատակն է զաւակներ տալ ընտանեաց առ ի պատուել զծնողս և շարունակել նախնեաց պաշտոնն : Արդ , մինչեւ իսկ օրինաց սահմանած հասակին մէջ կնոջ ամուսնինն հաստատուելէ յետոյ , այլը չգործածեր իւր օրինական արտօնութիւնն : Ամուսնաթողութիւնը բուռն խզում մ'է , և պաղ արեամբ գործադրելու համար պէտք է մոռնալ իւր սիրած կինն , հակառակ անոր ամուսնեան : Կրնայ կինը պատասխանատու բռնուիլ դժբաղդութեան մը , որ նոյնչափ ցաւ կը պատճառէ իրեն , որչափ ամուսնոյն : Բայց ոչ , յայնժամ ամուսինը միացեալ կը մնան : Ահա փորձին տուած դասը : Տարակոյս չկայ թէ մարդ մ'իւր կեանքը փոխելէ առաջ խորապէս կը խորհի միշտ , կը հարցնէ ինքնիրեն թէ ուրիշ օրինաւոր կին մ'առնելով զաւակներ պիտի ունենայ անկէ . թերեւս ի դերեւ սլտի ելնէ իւր յոյս . . . Ի՞նչ հարկ ուրեմն կեղակարծ փորձելով իւր կեանքը արեւոյնելու : Ուստի միացեալ կը մնայ իւր կնոջ հետ , և ընտանեաց սուղմէն մին ընարելով կ'որդեգրէ համաձայն որդեգրական օրինաց : Այս մըջոց կը գործածուի յաճախ ամուսնութեան հիւանդութիւնը դարմանելու համար , մասնաւոր երբոր ընտանիքն ընչեղ է :

Որչափ շատցնեմ օրինակները , նոյն եղբակացութեան կը հասնիմ , թէ օրինաց արտօնած ամուսնաթողութիւնը կը դատապարտուի սովորութեամբ : Անուրանալի իրողութիւն մ'է այս : Ինչ որ կ'ուղեն թող ըսեն . ամուսնաթողութիւնը բնութեան օրէնք չէ . ընկերական տեսակ մը միժմալի հետեւանք է . և իրօք , օրինաւոր լինի թէ սպօրէն , չը կայ ամեն տեղ : Ի՞նչ են ամուսնական բաժանումներ , եթէ ոչ տեսակ մ'ամուսնաթողութիւն : Միայն թէ , կը յօժարիմ հաւատալ , որ այն երկիրներու մէջ , ուր օրինաւորապէս ամուսնաթողութիւն չկայ , բաժանումն նուազ ամուսնաթողութիւնը կը լի-

նէին, եթէ ամուսնաթողութիւն կենար: Թողունք բաժանումը, բայց ամուսնաթողութեան գալով, ամուսին մ'այդ ծայրայեղութեան հասնելու համար երկար պիտի խորհէր, ինչպէս մեր մէջ կէս միջոցը լրջաբար խորհիլ չեն տար: Արջափ ամուսինը կան որ կը բաժնուին, բայց ամուսնաթողութիւն յանձն չպիտի առնուին նոյն պատճառներով. . . : Աը տեսնեմ սակայն թէ ի նպատակ ամուսնաթողութեան կը փաստաբանեմ, որոյ համար կը չքմեղացնեմ զիս, վասն զի արեւմտեան և չինական ընկերութեանց վիճակները բացարձակապէս տարբեր են: Մեր մէջ կիսին առանց դրամոթաի կ'ամուսնանայ: Հարբակոնի «առանց դրամոթաի» վսեմ խօսքը՝ բնաւ խնայող չունի: Դրամ և կին բընաւ առնութիւն չունին միմեանց հետ: Անայք չեն ժառանգեր: Անշուշտ իդական սեռն անդունել չեմ ուզեր. բայց Ձինստտանի ամենէն երջանիկ և ամենէն խնայողն օրէնսդրութիւններէն մին է այս: Դրամի ամուսնութիւն չկայ անդ:

Ջանացի հասկցնել դրամի ամուսնութիւնըն իմ հայրենակիցներուս, և կարծեցին միշտ թէ առեւտրական դործողութիւն մ'է, առեւտուր մ'է: Մեր մէջ ծնողք երկար ժամանակ յառաջուց կ'սկսին համրել պատուաւորութեան իրաւունքներն այն ընտանեաց, յորմէ աղջիկ պիտի խնդրեն. աղջկան բարեմասնութիւնները կը հարցնեն կը փնտռեն: Իսկ Եւրոպայի մէջ օժտին դրամները կը համրեն, յոյսերը կը հաշուեն, այն է ծնողաց մահն, և երբ լաւ մը համրեն, յաւելումներ ընեն, և կըր դուստրի մը հասնին, ամուսնութիւնը կը կատարուի. լաւ ամուսնութիւն:

Այսպէս չէ՞: Ինչո՞ւ Մոլիէրի «առանց դրամոթաի» խօսքը վսեմ պիտի լինէր, եթէ իրողութիւնն այսպէս չէր:

Դրամի ամուսնութիւնը ամենէն ծանր թշնամանքն են կանանց համար: Բայց կանայք չեն զգար նախատինքն, որովհետեւ կը թողուն որ գնեն զիրենք. շատ անգամ ալ իրենք զիրենք վաճառելու քաջասրտութիւնն ունին:

Աը խոստովանիմ թէ ամուսնաթողութիւնն ոչ եւս կարեւոր կ'երեւի ինձ՝ երբոր քնները մի այսպիսի ընկերական վիճակ:

Արջափ թոյլ է այսպիսի ամուսնութեամբ

միացումն: Ա՛, մեր բարոյք առաւել ամրապինդ են, առաւել արժանապատուութիւն ունին, և անհնար է ինձ հասնիլ, հակառակ իմ լաւադոյն յօժարամտութեան, այդ հանդիսաւոր աւանդութեանց և ճղճիմ մանրադիտութեանց խառնուրդին, որ ծաղրաշարժ թատերախաղի կը նմանի: Այսպէս կազմուելով, ամուսնութիւնն ա'յնչափ դիւրարեկ եղած է, որ մեծ միադիտութիւն ու ճարտարամտութիւն պէտք է անոր զառաժանքըն ուղղելու համար. և ամուսնաթողութիւնը սրաշարման թնդանօթ մը լինելով, շատ կը վախճամ որ իւր շանթին հետ չառնու չտանի ամուսնութեան մէջ մնացած դոյզն բարիքը: Բայց այս իմ դործ չէ:

Միակցորդ ընտանիքն յոյժ յարգի է Ձինստտանի մէջ:

Մեր տաղարանին հին երգերէն մին այսպէս կը ներբողէ սիրով միացեալ ամուսիններն.

Աքլորն երգեց, կ'ըսէ կինն,
Այրը կը պատասխանէ, բան մը չտեսնուիր.
Տակաւին լուսցած չէ:
— Ել, գնա, երկինք նայէ.
— Այդուն աստղն արդէն երեւցաւ,
Պէտք է երթալ, միտքդ բեր
Որ վայրի սադ և բադ
Պիտի սպաննես նետահար:

Արձակեցիր նետերդ
Եւ հասար նպատակիդ.
Քիչ մը զինի խմենք,
Մեր կեանքն ի միասին անցունենք.
Թող ներդաշնակին մեր նուագարանը.
Եւ բնաւ ձայն անկանոն
Չզարնէ մեր ականջին:

Այսպէս է երգն այն ամուսնոց, որք ո'չ Ռոմէյ են, ո'չ Թիւլիէթ, թէեւ կրնայ որ սխալմամբ այնպէս կարծել: Իւր փառասիրութիւնն է ամուսնական սպարտականութիւններն ուսուցանել և ոչ մեծ կիրքերը բանաստեղծել: Եւ այդ որսորդ մի՛ կարծէք թէ խեղճ լեռնական մ'է, անարժան ձեր համակրանաց, իւր դժնդակ կեանքը պահպանելու համար որս զարնելու հարկադրեալ. ընդ հակառակին՝ հարուստ մարդ մ'է, վասն զի տաղերգն այսպէս կ'աւարտի.

Թանկագին քարեր ընծայէ
Քեզ յայց եկող բարեկամաց,
Որ առնուն տանին
Իրենց դօտիէն վար կախած:

Ըսի թէ ամուսնաթողութիւնը դատաւարտուած է սովորութենէ, մանաւանդ ազնուական դասուց մէջ աւելի դարձեալ է: Լաւադոյն կը համարին ժողովարձ զինուորներ ընել, քան թէ հրապարակ հանել ընտանեկան կենաց գաղտնիքն, երբոր խղման պատճառներն յոյժ ծանր չեն:

Մնաց որ, կիներ սնախառական պատճառներով աւելի փոյթ ունի խաղաղութիւնը պահպանելու և ամուսնաթողութիւն չուզելու, վասն զի իւր ամուսնական փոխդրոն յարակից պատիւներէն զատ բան մը չունի:

Ամուսնութիւնը կուտայ կնոջ այն ամեն արտօնութիւնները՝ զորս այրը կը վայելէ, մինչեւ իսկ անոր աստիճանին համապատասխան հազնելու արտօնութիւնն: Այս պայմանաց մէջ ամուսնաթողութիւնը ծայրագոյն անմիտութիւն է, և եթէ կիներ կը հասկնայ զայս, ամուսնութիւնը միացեալ կը մնայ:

Զինական լինելով հանդերձ, մեր օրէնսդրաց այս տրամադրութիւնները, կնոջ ազդեցութեան մասին, ոչ նուազ իմաստուն են: Մեր մէջ գրեթէ անհնարին է որ մէկը կարող լինի ըսել «Փնտուեցէք կիներ»: Արեւմտեան սկզբունքը մ'է այս:

Ինչպէս որ պիտի հաստատեմ ուրիշ գըլխոյ մը մէջ, կիներ այնչափ երջանիկ է Զինաստանի մէջ, որչափ Ներսիսի մէջ: Բայց անձնականութեան հոգին յոյժ զարգացած չլինելով, ո՛չ գայթակղութեանց վրայ կը խորհի, ո՛չ մեքենայութեանց:

Ազնուական ընտանեաց մէջ մանաւանդ ազնուազնեական են: Իրենց աստիճանին գոռոզութիւնն ունին, որ անոնց վարուց ծանրութիւնը կը պահէ, և ի զուր առիթ կը փնտռէ որ ազնուականաց դէմ ծաղրաբանելու: Ներսիսի մէջ այս խօսքը գրուած է. «Զկայ ուրիշ տեղ մը, ուր աւելի բաներ կատարուին, քան ազնուական աշխարհի մէջ»: Ճշմարիտ է այս, ամեն բան կայ անդ:

Այդ աշխարհ ամեն տեղ կը գտնուի, բայց կը տեսնեմ որ կը ծաղրեն: Այս բան չտեսնուիր Զինաստանի մէջ:

Գործաւոր դասուց մէջ ալ ամուսնաթողութիւնն յոյժ քիչ կը պատահի: Անդ ընտանեաց ամեն անդամը կ'աշխատին հանապարհօրդ հացն սպահովելու. վիճաբանութիւնը ժամապաճառութիւն են: Հայր, մայր և որդիք դաշտը կ'երթան ի միասին,

ինչպէս հին ժամանակի կենաց մէջ: Եթէ վիճին միմեանց հետ, որ կը պատահի երբեմն, հաշտութեամբ կը վերջացնեն: Անձրեւէն յետոյ պարզ օդ: Եթէ պատահի որ վէճին պատճառները ծանր լինին, եթէ այրն ընտանեաց ինչքը վատնէ, և կիներ դատաւորին դիմէ ամուսնաթողութիւն ձեռք բերելու համար, դատաւորը չատ անդամ ետ կը կենայ վերջնական խղում մը վճռելէ: Ինքն է դատաւորն, և այդ իրաւամբ կ'սպասէ որ իւր բարի խրատները փոփոխութիւն մը դործեն մեղսւորին սրտին մէջ: Իւր խոհեմութիւնը գրեթէ միշտ կ'որոշուեսէ:

Վերջապէս ուրիշ նկատում մ'ալ կայ որ միշտ կրնայ ժամանակին արդելու ամուսնաթողութիւն խնդրող կիներ: Զաւակաց և անոնց ապագային վրայ հիմնած յոյսը: Զինաստանի մէջ մայրն է որ կը դատարարակէ իւր որդիքն, և մեք չպիտի կրնանք երբեք ըստ բաւականի քաղաքակրթիլ աւելի կատարեալ դատարարութիւն մը հասկնալու համար: Մայրն իւր փառափրութիւնն իւր որդեաց սրտին մէջ կ'անցունէ: Անոնցմով կրնայ ինք ազնուականութիւն, պատիւ և փառք գտնել. և երբոր այսպիսի զգացում մը կը բնակի կնոջ սրտին մէջ, զբռնեալն է: Մեք՝ կիներ փշոյ յասացող եւ մ'ըրած ենք: Այս յուսով է որ անդապար կը դիմանայ զինքը պաշարող վատաց, երբոր այրը թշուառ ընէ զինք: Կը համբերէ որպէս զի զաւակներն օր մը վարձատրեն զինք և ամուսնոյն անարդանաց վրէժն առնուն:

Անհար է ինձ աւարտել զայս նիւթ առանց քանի մը խօսք ըսելու շնութեան վրայ, զոր օրէնքն Ներսիսի մէջ չպատժեր իրեւոճիր:

Մեր մէջ ընդունուած է թէ այրը միայն իրաւունք ունի իւր կիներ սպաննելու՝ երբոր յոնցանքի վրայ բռնէ: Ահա այս կը լուծէ ամուսնաթողութեան խնդիրը:

Սակայն չնայող կիներ սրտուհատող սրտոյ վրայ այնպիսի այլանդակութիւնը ըսուած են, զորս չեմ կրնար չյիշել: Ալեքսանդր Տիւմա որդի կ'ըսէ իւր Խոյի ամասնաթողութեան գրքին մէջ, երես 85. «Թոնքինի և Զինաստանի մէջ շնացող կիներ այնպիսի չարչարանքի մը կը մատուցի, զոր ծիամարդ Քիրոնի մայրը՝ Փիլիբա՝ յոյժ հաճելի դատած ր անշուշտ: Ճշմարիտ է որ Քիրոն՝ ծիու

կերպարանք առած աստուած մ'էր : Այն չարչարանքէն յետոյ , փիղ մը , որ այս գործի համար կրթուած է , կը բռնէ կինն իւր կընձիթով , վեր կը վերցնէ և ապա գետինը ձգելով կը ջախջախէ իւր ոտից տակ : »

Արնայի՛ հերքելու համար՝ բաւական համարիլ այս հատուածի պարզ յիշատակութիւն : Անտեղին կը դերագրանցէ զհաւանականը : Բայց այս հատուած ապացոյց մ'է այն զրուծեան՝ որ մեր բարքն ու սովորութիւնները նկարագրելու համար ընդունուած է Եւրոպիոյ մէջ : Ստոյգ է որ Չինաստանի մէջ աւելի նուազ փիղ կայ քան Ֆրանսայի մէջ : Հաղիւ երկու կամ երեք հատ կը գլտնուի Բէքինկի մէջ , զորս հետաքրքրութեան համար կ'երթան կը տեսնեն իւրեւ հալուադիւտ կենդանիներ : Բայց նորաձեւութիւն է Չինաստանի իբր բարբարոսութեան ասպատան նկարագրել : Անագորուն և խժդեղժական սովորութիւն մը կայ տեղ մը : Ո՞ր երկրի մէջ է : Չկրցի՞ք գուշակել : Չինաստանի մէջ է :

Պարտէր փերագառնալ այս երեւակայական անհեթեթութեանց վրայ , և՛ գոնէ ի սէր ձյնարտութեան՝ ապացուցանել կամ յետս կոչել :

ԹՈՒԼԲԵՐԱՆ ԿԻՆԸ

Քանի մը տարի կայ Մաքոնի փոքրիկ գեղեցիկ քաղաքներէն միոյն՝ Քլիւնի մէջ կ'ապրէր լաւ մարդ մը , զոր կը կոչէին Հայր Լաբալիւթ :

Ամեն օր , առաւօտուն շատ կանուխ , ձեռք կուտար որ գէշ օղը արգելք չլինէր , գործիքներն ուսին վրայ , կ'երթար աշխատել այգին :

Հայր Լաբալիւթ վաթսուց տարին հասած էր և հարստացած չէր : Սակայն ինքզինքը դիւրաւ կը մխիթարէր , վասն զի քիչ մը փոխոսիաց էր և միշտ ուրախ զուարթ բնաւորութիւն ցոյց կուտար : Նաեւ , կարելի էր հաւատալ որ գոհ էր իւր վիճակէն . չէր նախանձեր ուրիշներու հարստութեանցը , բաւական բարեկեցիկ վիճակ մ'ունէր . վասն զի չափաւոր էր իւր փափագներուն մէջ , և գոհ կը լինէր քիչով :

Նոքա որք կը ճանչնային ծերունի այգեգործը , կ'ըսէին .

— Ի՞նչ աղէկ մարդ է Հայր Լաբալիւթ . բնաւ չտրտնջար և ո՛չ ալ գէշ կը խօսի իւր դրացիներու վրայ : Ամեն ատեն ժպիտ մ'ունի անոնց համար որոց կը հանդիպի , և երբ քիչ մը կը կայնի կը խօսի , միշտ ծիծաղաշարժ պատմութիւն մը կը պատմէ , այնպէս որ խնդալէզ կողերդ չես կրնար բռնել : Բաւական է որ ձերմակ եղեամբ մայիսի մէջ Հայրէծեր Լաբալիւթի խաղողներն , և այն ատեն Քլիւնիի ամենէն երջանիկ մարդն է :

Բայց , աւա՛ղ , եթէ արտաքին երեւոյթէն դատենք , քանի՞նք կան որք Հայր Լաբալիւթի պէս երջանիկ կը կարծուին և սակայն բոլորովին հակառակ վիճակի մէջ են : Ոչ , ծերունի այգեգործը երջանիկ չէր . իւր վիշտը ծածուկ կը պահէր , ինքզինքին համար միայն կը պահէր , սրտին խորը : Եւ այս վիշտն ունէր երկար ատենէ ի վեր , յորմէ հետէ , ինքն ալ ուրիշներուն նմանելու համար , ամուսնացած էր : Իւր կինը միակ պատճառն էր իւր վշտին . կինը , անշուշտ առանց ուղիւտ , թունաւորած էր ամուսնոյն կեանքը :

Եւ սակայն , գէշ կին մը չէր , ո՛չ ալ ծոյլ էր և ո՛չ ալ ձեռքը բաց . . . Եթէ նա ունէր , ինչպէս ուրիշներն , իւր լաւ և գէշ վայրկեաններն , այսու ամենայնիւ Հայր Լաբալիւթ կարօտ չէր սովորելու որ կատարեալ կիներն այնքան հազուադիւտ են ի Քլիւնի որքան ամեն ուրեք : Ուրեմն տիկին Լաբալիւթ տան տիկին լինելու սքանչելի յատկութիւններով օժտեալ էր , բայց դժբաղդաբար շատ գէշ պակասութիւն մ'ունէր , զոր բարեսիրտ այգեգործը՝ զարհուրելի պակասութիւն կը համարէր : Տիկին Լաբալիւթ թուրքերան կին մ'էր :

Անկարելի է պատմել այն ամեն հնարքներն զոր տիկին Լաբալիւթի ամուսինը ի գործ դրած էր իւր կնոջը լեզուն զսպելու համար : Բարբանջանք , շարախօսութիւնք կը տարածուէին ամբողջ քաղքին մէջ :

— Իրաւ որ , կ'ըսէր Լաբալիւթ , իմ կինս կարող է պարտաւորել մինչեւ իսկ երկու պապեր իրարու հետ կուռելու :

Խեղճ Լաբալիւթ արդարեւ շատ կը նեղուէր իւր կնոջ շատախօսութեան , առանց հաշուելու այն ամեն տեսակ նեղութիւն

զոր իւր կնոջ թուրքերանութիւնն իրեն կը պատճառէր : Այս առթիւ շատ անգամ տան մէջ գտնուած իւր կը պատահէր :

Արդ, առտու մը երբ այդեզործը դարձեալ բարկացած էր — Հայր Լաբալիւթ քիչ անգամ կը բարկանար — և այդ ին երթալէն առաջ կը յանդիմանէր կինը զուր բացուեցաւ և սուր ու երկար ծայն մ'եկաւ մէջ նետուեցաւ այն կռուոյն զոր էրիկ կնիկ կ'ընէին. — Աղուորիկ խաթունս, այսօր ինձմէ բան մը գնէ . . . սանար ունիմ, կոճակ ունիմ, դերձան ունիմ, ասեղ ունիմ, անուշիկ անուշիկ օճառներ ունիմ, նոր օրացոյցներ ունիմ :

Այս ծայնը մի ճշմեկնի ծայնն էր : Ֆրանսացեաց շատ մը գաւառներու մէջ այսպէս կը կոչուէին դռնէ դուռ սպորտող մանրավաճառ փերեզակները :

Հայր Լաբալիւթ դարձաւ ծախողին և դաժան կերպով մը ըսաւ .

— Բան մը չենք ուզեր :

Մայնէնք վրայ տուաւ :

— Աղուոր միսկ մը — աղուոր օճառ մը :

Եւ որովհետեւ ասոնք ըսած ատեն փերեզակը կը խնդար, Լաբալիւթ կարծեց թէ զինքը ծաղրելու դիտաւորութիւն ունի : Բարկութենէն կրակ կտրեցաւ :

— Գետնին տակը անցնելու մարդ, կորի՛ր այս տեղէն, ապա թէ ոչ . . .

Այս ըսելով վերցուց իւր երկաթէ ճանկը : Մախողը կծիկը դրաւ, բայց սեմէն դուրս ելնելով ետ դարձաւ, և խնդալով նորէն կրկնեց .

— Աղուորիկ դերձան, անուշիկ օճառ :

Հայր Լաբալիւթ դուռը երեսին դոցեց : Քիչ մը ետքը իւր այգին դնաց . ցերեկի մօտ ետ դարձաւ եկաւ, ըստ սովորութեան կնոջը հետ ճաշելու համար : Բայց կինը չուարեցաւ, կարծես թէ ամուսինը չէր ճանչնար, այնքան անոր այլափոխեալ երեսին սաստիկ թախծութիւնը զինքը պատեր պաշարեր էր :

Կինը անհանդիստ է, կը վախնայ և կը սկսի հարց ու փորձ ընել թէ՛ ի՞նչ ունի, գլխուն ի՞նչ է եկեր : Լաբալիւթ հետզհետէ աւելի կը յուզի, բայց պատասխան չտար : Սեղան կը նստի, կինը կերակուրը առջին կը դնէ, բայց Լաբալիւթ որ այնքան ախորժակով կը ճաշէր, այս անգամ ետ կը մղէ սընակը : — Կինը նորէն կը հարցուփորձէ :

— Ձէ', չէ', հարցուփորձ մի' ըներ, բան մը պիտի չիմանաս :

Եւ արմուկը սեղանին յետած, զլուխը ձեռքերուն մէջ սկսաւ հառաչանքներ արձակել, դիմացինին սիրտը կտոր կտոր ընելու աստիճան :

Խեղճ կնկան բերանը բռնուած էր, ինչ ըսելիքը չէր գիտեր, և կուզէր անպատճառ դիտնալ այսպիսի մեծ վշտի մը շարժառիթը : Մուռդի եկաւ և աղաչեց ու պաղատեց որ խօսի :

— Ա՛հ, կը խղդուիմ, ըսաւ վշտահար եղանակաւ . բայց միթէ կրնամ քեզի ըսել ինչ որ ըրի . . . պիտի երթաս մէկէն դրացիներուդ պատուէ :

— Ձէ', մարդս, չէ', Աստուած վրայ մէկու մը չեմ ըսեր :

— Կնիկ, կ'երթաս կ'ըսես, կ'երթաս կ'ըսես, վասն զի կարող չես շատ լեզուդ բռնել և զիս շիտակ պիտի զրկես չղթայակապ աշխատութեան :

— Շղթայակապ աշխատութեան, ա՛խ, ի՞նչ ես ըրեր, Տէր Աստուած . . .

— Կը խոստանամ որ բաց բերան չըլլաս :

— Մարդս, երգում կ'ընեմ որ բերնիկս չեմ բանար :

— Անանկ է նէ ըսեմ : Այդիս աշխատելու վրայ էի, երբ ճշմեկնը, գիտեմ, սա առաւօտեան ճշմեկնը . . .

— Է՛յ, է՛յ, գիտեմ :

— Աջ կողմս եկաւ կայնեցաւ, և առանց ես իրեն բան մը ըսելու, սկսաւ ինձ կոտորոյց տալ . իմ ալ աղէկ ժամն չէր, բարկացայ և բա՛հս դլխուն իջեցուցի, մարդը ան տեղը լնցաւ :

— Մարդ Աստուծոյ, ի՞նչ ըրիր : Ա՛խ, սպաննեցիր . . . ի՞նչ պիտի ըլլանք . ալ բաներնիս լնցաւ, կորսուած ենք :

— Ձէ', չէ', հոգ մի' ըներ : Միս միտակ երկուքնիս էինք, մեզ տեսնող չեղաւ . . . բայց լեզուիդ աղէկ զգուշութիւն ըրէ, բերնէդ բան մը չի փախցնես :

— Է՛յ, մեռցնեցիդ վերքը ի՞նչ ըրիր :

— Ինչ պիտի ընեմ . այդին մէջ ծակ մը բացի և մէջը խոթեցի, լնցաւ դնաց : Նորէն կ'ըսեմ, լեզուդ բռնէ . թէ՛ որ բառ մը բերնէդ փախցնես, դործս լնցած է :

Այն օրն Հայր Լաբալիւթ ալ չվերադարձաւ այգին . էրիկ կնիկ նոյն օրը միասին ան-

ցուցին ախ ու վախ ընկելով: Միւս օրը, այգեգործը առաւուն կանուխ ելաւ. բնակարան հանդարտած էր և պատրաստուեցաւ իւր աշխատանքին երթալու: Բնակարան է որ կրկին և կրկին յանձնարարեց կնոջը մարդու բան մը չըսել:

Տանը գործերը կարգի դնելէ վերջ, տիկինը Լաբալիւթ գլուխը լի մաշլ մոտածութեամբ և ի հարկէ սիրտն ալ լեցուած՝ ըզգաց թէ ամուսնոյն ըրած սպանութեան գաղտնիքն չէր կրնար միայն իրեն պահել, բեռը շատ ծանր էր, ուրեմն վաղեց գնաց գտնել իւր գրացիներէն մին և եղածը չեղածը անոր ալ պատմել:

— Սակայն չըլլայ թէ մէկու մը բան մը ըսես, կը պատուիրէր անոր տիկին Լաբալիւթ ջերմալեւում արցունքներ թափելով. թէ որ բերանդ բանաս, մէկուն բան մ'ըսես, գիտցած եղիր որ իմ ալ, էրկանս ալ բաներնիս բռնած է:

Դրացի կինը շատոնց ի վեր կը ճանչնար Հայր Լաբալիւթը. գիտէր թէ ո'րպիսի քաղցրաբարոյ մարդ մ'էր. ամեն ոք ի Քլիւնի կը յարգէր զնա և ամեն ոք գիտէր թէ Հայր Լաբալիւթ միջիւնի մը վրայ անգամ չէր կոխեր. հետեւաբար խեղճ կինը ապշեցաւ մընաց երբ լսեց թէ՛ այսպիսի մէկը բահի հարուածով մարդ մ'սպաննած էր:

Այս իրողութիւնը որքան ալ արտաքոյ կարգի, որքան ալ սոսկալի երեւէր իրեն, բայց և այնպէս ուզէր չուզէր պիտի հաւատար, վասն զի տիկին Լաբալիւթ ինքն անձամբ կը խոստովանէր իւր էրկանը գործած ոճիրը:

Այս գրացի կինն ալ չարամիտ կին մը չէր, բայց ինքն ալ տիկին Լաբալիւթի պէս քիչ մը երկանիէկ լեզու ունէր և կախորժէր շատ խօսելէ: Իւր գրացուհւոյն խոստացաւ մէկու բան չըսել, մունջ ու համր մնալ: Սակայն հազիւ թէ տիկին Լաբալիւթ հեռացեր էր անկէ, իսկոյն շատախօսութեան դեւը մոտաւ ի նմա, և վաղեց գնաց գտնել ուրիշ քեռկին մը ամեն բան անոր պատմելու համար. աւելորդ է ըսել որ այս վերջինն ալ հարկ անհրաժեշտ համարեց բանալ իւր սիրտը ուրիշի մը և ահա ժամ մը չանցած բոլոր քաղաքը վեր ի վայր եղած էր:

Մարդ չմնաց որ չգիտնար թէ Հայր Լաբալիւթ սպաննած էր խեղճ մայրիկն մը և թէ

ապիրատ այգեգործը թաղած էր զայն իւր այգիին մէջ: Շուտով մոռցան այգեգործին պատուաւոր անցեալն. իրենց աչքին ուրիշ բան չէր երեւեր Լաբալիւթ, բայց եթէ չուսուական մարդասպան մը. Լաբալիւթ կեղծաւոր ծեր մ'էր: Անտարակոյս առաջին ոճիրը չէր որ կը գործէր. իւր բոլոր կենաց մէջ արտաքոյ կարգի կեղծաւորութեամբ մը յաջողած էր խաբել խաբխրել զամենը: Այն ատեն յիշեցին խել մը չարածճիւղութիւններ որոց հեղինակն ինքն Լաբալիւթ էր. ատենոք շատ խնդացած էին այդ չարածճիւղութեանց վրայ, և սակայն այժմ անոնց մէջ ակներեւ կը տեսնուէին Լաբալիւթի ապականութեան ապացոյցներն:

Երբ Ուպինո, քաղաքապահ զօրաց տասնապետը, տեղեկացաւ եղածին, յօնքերը պնտեց: Կանչեց Լալուան, քաղաքապահ զօրաց դասակին ամենէն ծերը:

— Ահաւասիկ, ըսաւ, ծանր խնդիր մը: Կարելի չէր մտքէ խօս անցընել որ այս պարկեշտաբարոյ փոքրիկ քաղքին մէջ մարդասպան մը գտնուի: Հարկ է որ ձի հեծնաս, սրննթաց երթաս Մաքոն, իմաց տաս այն տեղի դատարանին: Մինչեւ որ դու երթաս գաս, ես ալ ժամէն քաղաքապետն հետս առած կ'երթամ Լաբալիւթի բնակարանը և կը ձերբակալեմք զայն:

Լալուա ձեռքը մորթակին տարաւ եւ պատասխանեց քաջարի Բանտօրի նման.

— Տասնապետ, իրաւունք ունիս:

Վերջը իւր մեծ կողիկներն հագնելով և իւր մեծ թուրն ալ ասղրէն կախելով հեծաւ ձին և թռաւ ի Մաքոն:

Տասնապետ Ուպինո և գիւղապետ Ժասմէն գնացին ի տուն Հայր Լաբալիւթի որ դեռ այգիէն չէր վերադարձած:

Տիկին Լաբալիւթ սեղանը պատրաստելու վրայ էր երբ փոխանակ իւր ամուսնոյն, որոյ դալստեանը կ'սպասէր, տեսաւ որ քաղաքապահ զօրքերը ներս կը մտնեն: Խեղճ կինը դեղնեցաւ, գոյնը նետեց.

— Ո՛ր է Հայր Լաբալիւթն, հարցուց տասնապետը:

— Այս առաւել իւր ամեն օրուան սովորութիւն համեմատ՝ այգին գնաց աշխատելու, պատասխանեց կինը, բոլորովին տակն ու վերայ եղած. կերակուրն ալ պատրաստ է և հիմայ այգիէն կը վերադառնայ:

— Լաւ, կ'սպասենք :

— Բայց, տեսարք իմ, նայիմ ի՞նչ կ'ուզէք սա մարդէս :

— Մայր Լաբալիւթ, քեզ վերաբերեալ գործ չէ, իրեն ըսելու բան է :

Խեղճ կինը հասկցաւ որ իր դրացին լեզուն չէր կրցած բռնել, և քաղաքապահ զօրքերն եկած էին էրիկը ձերբակալելու . ոտքերը ձեռքերը դող ելաւ :

Հայր Լաբալիւթ այգիէն կը վերադառնար, լաւ մը անօթեցած : Տեսաւ որ չիողցին մէջ իւր տանը առջեւ շատ մը մարդիկ ժողովուած են, հասկցաւ, երեսը ծըռմըռկեց :

— Ա՛խ, թշուառականը լեզուն չէր կըրցած բռնել, սկսաւ մռմռալ :

Հետաքրքիրներուն մէջէն անցաւ գլուխը խոնարհեցուցած, որով չտեսաւ այն չար ակնարկներն որք իւր վրայ ուղղուած էին . բայց լսեց որ կ'ըսէին :

— Ինքն է՛, ինքն է՛, ահաւասիկ :

Աճապարանօք դռնէն ներս նետուեցաւ, բայց ինքզինքն երկու քաղաքապահ զօրաց առջեւ դտաւ :

Գլխարկն հանեց, բարեւեց տասնապետն այնպիսի դէմքով մը որ զարմանք կը յայանէր զանկա իւր տանը մէջ գտնելուն, և շատ քաղաքավար կերպով հարցուց թէ ի՞նչ բանի մէջ իրեն կրնար ծառայել :

— Հայր Լաբալիւթ, ըսաւ տասնապետը, պարտական ես պատասխանել իմ հարցմանցս . քիչ մը ստաջ եկան մեզ իմացնել որ ամենալայրադ ոճիր մը գործած ես :

Լաբալիւթ գլուխը խոնարհեցուց և պատասխան չտուաւ :

— Ա՛խ, տեսարք իմ, աղաղակեց կինը, ես ձեզ կ'ապահովցնեմ որ խեղճ մարդս բանիկ մ'ըրած չունի :

Հայր Լաբալիւթ ահեղ ակնարկ մը նետեց իւր կնոջը վրայ :

— Լուէ՛, թշուառական կին, հրամայեց նմա զայրագին ձայնով մը . դո՛ւ ես, դո՛ւ, այս ամեն չարեաց պատճառը :

Կինը աթուի մը վրայ ինկաւ և գլուխը ծածկեց գոգնոցին մէջ, հեծկտանքներն խեղդելու համար :

— Հայր Լաբալիւթ, պէտք է պատասխանել, կրկնեց տասնապետն հրամայական կերպով : Կը խոստովանի՞ս թէ դու ես մեղա-

պարտ այն ոճրին որուն համար ամբաստանեալ ես : Ստոյգ է որ սպաննած ես խեղճ Ֆայնէն մը և յետոյ զնա այգիիդ մէջ թաղած :

— Պարոն տասնապետ, չէք գիտեր . . .

— Հայր Լաբալիւթ, հարկ է ըստ կանոնաց պատասխանել իմ հարցմանս . ուրեմն վճռական կերպով պատասխանէ :

— Լաւ, ճշմարիտ է, պարոն տասնապետ : Ես սպաննեցի և թաղեցի իմ այգիիս մէջ խեղճ Ֆայնէն մը :

Տիկին Լաբալիւթի գոգնոցէն հեծկտանք մը լսուեցաւ :

— Հայր Լաբալիւթ, ըսաւ խիստ կերպով մը տասնապետը, դու առ հասարակ քու քաղաքակիցներուդ յարգանքը կը վայելէիր : Ի՞նչպէս կարող եղար այդ հասակիդ մէջ ոճրագործ լինիլ :

— Ա՛խ, պարոն տասնապետ, թոթովեց այգեգործն :

— Պատասխանէ՛, Հայր Լաբալիւթ :

— Ահաւասիկ եղելու թիւնը, Պ. տասնապետ :

Մայնէն մը ճանբաս կը կտրէր, ուղեցի մէկ դի ընել, այն ատեն ինձ կոտոջ ցոյց տուաւ . . . ես որ միշտ այնքան համբերող եմ, գլուխ տաքցաւ և ի՞նչ գիտնամ, բահի անանկ ուժով հարուած մը տուի, որ այն տեղը ինկաւ մեռաւ :

— Յետոյ ծակ մը բացիր այգիիդ մէջ և հոն թաղեցիր զայն :

— Այո՛, պարոն տասնապետ :

— Իւր ոճիրը կը խոստովանի, ըսաւ տասնապետը իւր քաղաքապահ զինուորաց, և ձեռքը այգեգործին ուսին վրայ դնելով .

— Հայր Լաբալիւթ, ըսաւ, կը ձերբակալեմ գեղ յանուն օրինաց :

Եւ մինչդեռ մայր Լաբալիւթ յուսահատութենէն մաղերը կը փեթթէր և տան մէջ վայնասուն մը ձգեց, ոստիկանները քաշկըռտելով ոճրագործը տարին նետեցին քաղաքային բանտը : Բազմութիւնը զրգուռած թշնամական ոգւով կը պոռար ետեւէն .

— Սրիկայ, չղթայակաւ բանտարկութեան պիտի երթաս :

Բազմութեան մէջ կային նաեւ այնպիսիք որք կ'ըսէին .

— Գլուխը պիտի կտեն, գլուխը :

Հայր Լաբալիւթ կանիճէր տիկին Լաբալիւթն ալ, Քլիւնիի կնիկներն ալ և աշխարհիս ամեն շատախօս կնիկներն ալ :

Քլիւնիի գիւղապետն, օգնականը, նախաքննիչ դատաւորը, Քլիւնիի բոլոր իշխանութիւնը, միացած քաղաքապալանութեանց պաշտօնատուները, կ'սպասէին դատաւորաց գալըստեան: Լալուառ քաղաքապալանը գնացած էր նոցա խնայ տալ:

Ժամը չորս ու կէսին, հասարակաց դատախազն, հետն ունենալով հարցաքննիչ դատաւոր մը և գրագիր մը, կը մտնէր ի քաղաքն Քլիւնի: Այս պարոնայք պաշտօնատան մէջ ընդունուեցան իշխանութեանց կողմանէ, որք ի նկատի առնելով պարագայները՝ տխրագէմ կերպարանք մ'առած էին: Հրաման տրուեցաւ ոճրագործն առջեւնին բերել:

Հայր Լաբալիւթը հանեցին բանտէն և երկու քովէն ոստիկաններով բերին դատաւորաց առջեւ:

Մինչեւ ցայն վայր ծերունի այգեգործը բաւական հանդարտագէմ երեւցած էր, կարելի էր մինչեւ խի երթաղբել թէ խելքը չէր հասներ թէ ի՞նչ ծանր վիճակի մէջ էր: Բայց երբ մէկէն ի մէկ ինքզինքը գտաւ ի ներկայութեան հասարակաց դատախազին և հարցաքննիչ դատաւորին, այսինքն առաջի վեհափառութեան արգարութեան, անհանդիստ եղաւ, խռովեցաւ և ինքզինքը կորսնցուց:

Երբ դատաւորն արտասանեց սա խօսքերն, «Լաբալիւթ, մարդաստանութիւն մը ըլլած ես» աչքերը չորս բացաւ, իբր թէ չհասկնար:

— Մարդաստանութիւն մ'ըրած ես, ծանրաբար կրկնեց մագիստրոսը, դու սպաննած ես...

— Տէր դատաւոր, ճշման մ'սպաննեցի:

— Սպաննեցի՞ր, կը խոստովանիս:

— Կը խոստովանիմ, տէր դատաւոր:

— Այդ ճշմանը վրէժ գրգռեց:

— Ինձի կոտու ըրաւ:

Շատ մը ծանրաբարոյ անձինք հաղիւ հազ կրնային բռնել իրենց ծիծաղը: Պէտք է ըսել որ Հայր Լաբալիւթի դէմքն ալ ծիծաղալարժ էր:

— Ի՞նչպէս ըրիր որ այս մարդն սպաննեցիր, հարցուց հարցաքննիչ դատաւորը:

— Մայիքէնը, տէր դատաւոր:

— Շատ լաւ, ճշմանը թող ըլլայ, պատասխանէ:

— Իմ բախ ձեռքս էր, վերուցի և չնքով շնորհքով հարուած մը տուի ճայիքէնի գլխուն:

Ներկայք սառսուռ զգացին:

— Ամէն մարդ գիտէ, տէր դատաւոր, թէ ես չար մէկը չեմ: Կ'երդնում որ առաջին անգամն է ինձ ասանկ բան կը պատահի:

Ալ այս անգամ ոչ ոք կրցաւ խնդար բռնել:

— Ոճիր գործուած տեղը պէտք է փոխադրուինք, ըսաւ ընդհանուր դատախազը, և պէտք է ճայիքէնի մարմինը դրուած տեղէն հանենք:

Երկու ոստիկաններ կեցան Հայր Լաբալիւթի երկու քովերն, և ամենը միասին պաշտօնատուէն դուրս ելան:

Աղմկայոյզ բազմութիւն մը, խռովալիր, ուղեկից եղաւ անոնց միջեւ այգին:

— Այս տեղ սպաննեցիր ճայիքէնը, հարցուցին Լաբալիւթի:

— Այո՛:

— Հիմա՛, ցոյց տուր մեզ այն տեղն ուր զայն թաղիցիր:

Հայր Լաբալիւթ, միշտ երկու ոստիկաններ երկու քովերէն, մտաւ իւր այգին. ետեւէն կ'երթային դատաւորն և Քլիւնիի իշխանութիւնը: Քանի մը քայլ առնելէն ետքը, կայնեցաւ, ըսելով.

— Հոս է:

Ամբոխը սարսուեցաւ և գրաւեց այգին, այնքան անհամբեր էր հանդիսատես ինեւու տխուր տեսարանին, որ իրեն պիտի ներկայանար: Մարդ մը, ձեռքը բրիչ մը, առաջ անցաւ և սկսաւ հողը սկզբել: Հինգ վայրկեան անցաւ, արդէն բաւական լայն և խոր ծակ մը բացուած էր, բայց դեռ բան մը երեւան չէր ելած: Ընդհանրապէս դատաւորը հանդարտ բնավորութիւն ունին, բայց պէտք է ըսել որ այս անգամ անոնք ալ համբերութիւննին կորսնցնել սկսան:

— Շատ անօգուտ աշխատութիւն մը կ'ընեմ, ըսաւ սկզբից, աղէկ կը տեսնեմ որ բան մը չկայ:

Ընդհանուր դժգոհութեան և յուսադրելու թեան քրթ մնչիւն մը լուեցաւ:

— Լաբալիւթ, ըսաւ ընդհանուր դատախազն, այս տեղ չէ՞ որ թաղեցիր քու զոհը:

— Թողութիւն կը խնդրեմ, տէր, այս տեղ է:

— Բայց կը տեսնես որ բան մը չեն դըտներ :

— Դարձեալ թողութիւն կը խնդրեմ, տէր ընդհանուր դատախազ, բաւական ատեն է որ պեղիչը մայիկէն հողէն հանեց :

— Է՛, այս մարդը խենդ է, դոչեց դատաւորը :

Ապշուածեամբ կը նայէին Հայր Լաբալիւթի երեսն : Իսկ նա ամենայն հանդարտութեամբ գետին ծռեցաւ և հողին վրայէն վերցուց ահագին խխուռն մը (սպանկեօղ), որոյ արիւնաթաթախ մարմինը իւր խեցեմորթ պատեանէն դուրս կ'երնէր :

— Ահա կը տեսնէք որ սուտ չեմ խօսած, ըսաւ, իրաւ որ հոս թաղեցի զանիկա, վասն զի զայն կը տեսնէք ահաւասիկ :

— Լաբալիւթ, միթէ կը յանդգնի՞ս խընդալ արդարութեան վրայ :

— Տէ՛ր դատախազ, իւր բոլոր կենաց մէջ Հայր Լաբալիւթ, որ խեղճ մարդ մ'է, յարգած է միշտ իւր երկրին օրէնքներն և արդարութիւնն, ինչպէս նաեւ զանոնք որ կը ներկայացունեն զնա :

— Վերջապէս, ըսէ՛, ո՞ւր թաղեցիր ըսպաննած մարդդ :

— Ի՛նչ, ես մարդ սպաննած եմ, ո՛հ, պարոնայք, կրնա՞ք այսպիսի բան մը մտքերնուդ անցընել : Ինչպէս պատիւ ունեցայ զիտել տալ նաեւ նախաքննիչ Պ. դատաւորին, մայիկէն մը սպաննեցի, որ ահաւասիկ :

Այն ինչ այս խօսքերն արտասանեց և ահա բազմութեան մէջ հնչուեցաւ ամենէն ահեղ խնդալու քրքիջը որ երբեք լսուած չիներ :

— Պարոնայք, ըսաւ այն ատեն Քիւլենիի գիւղապետը դառնալով դատաւորներուն, պէտք է ձեզ ըսել որ Քիւլենիի մէջ տեղական բարբառով մայիկէն կը կոչուին խխուռնը և և անոր զանազան տեսակները :

Խնդալու քրքիջները կրկնուեցան, բայց դատաւորը և ոստիկանք գոհ չէին :

— Լաբալիւթ, հարցուց նմա դաժան կերպով ընդհանուր դատախազը, անբացատրելի նպատակաւ մը տարածեցիր այս ծիծաղելի լուրը թէ ոճիր մը գործած ես :

— Ո՛հ, ես չէի :

— Ի՞նչ քաղբիդ մէջ մեծ յուզմունք առաջ բերիր : Ոստիկանները տունդ ներկայացան. փոխանակ անոնց ճշմարտութիւնն ը-

սելու, շարունակեցիր քու յանդուգն կատակդ, թող տալով որ զքեզ ձերբակալեն :

— Դատաւորաց ճշմարտութիւնն ըսի, որովհետեւ մայիկէն մը սպաննած եմ :

— Այնպէս լաւ ձեւացուցիր քու պարսաւելի կատակերգութիւնդ որ յաջողեցար զամենն ալ խաբել : Բայց քու վնասովդ պիտի սովորիս թէ՛ ոչ որ կրնայ յանդգնիլ իւր քաղաքացւոց հանդարտութիւնը խառնել, գայթակղութիւն յառաջ բերել և խնդալ իշխանութեան վրայ :

Եթէ ոճիր մը չգործեցիր, յանցաւոր ես այնպիսի յանցանքի մը համար, որոյ ծանրութիւնը պիտի դատենք : Լաբալիւթ, դատարանի առջեւ պիտի ելնես :

Հայր Լաբալիւթ դեղնեցաւ, և խոշոր արցունքներ աչքերէն վազեցին :

— Ի՛նչ, դատարան պիտի ներկայանամ, նման աւազակի մը կամ եղեռնագործի մը, դոչեց, ես, ծերունի Հայր Լաբալիւթ, դոր բոլոր Քիւլենի կը կոչէր բարեմիտ մարդ : Ա՛հ, պարոնայք, կը ճանչնամ թէ յանցաւոր եմ, շատ կը զղջամ և ամենեւ ալ ներողութիւն կը խնդրեմ : Տեարք դատաւորը, պարոն գիւղապետ, և դուք ամենայն իշխանութիւնք, մտքէս չէր անցներ որ այս բանս այսքան աղամուկ պիտի հանէր և այսքան առաջ պիտի երթար, իրաւ որ մտքէս չէր անցներ, կ'երգնում... Ա՛հ, իրաւ որ այս եղածներուն վրայ շատ կը ցաւիմ :

— Տեսնենք, Հայր Լաբալիւթ, ըսաւ գիւղապետը, ամեն մարդ ի Քիւլենի գիտէ թէ դու աղէկ մարդ մ'ես, բայց ի՛նչ տարօրինակ գաղափար ունեցար : Անշուշտ պատճառ մը ունէիր որ գործեցիր : Ի՛նչ էր միտքդ, Հայր Լաբալիւթ : Ըսէ՛ տեսնենք ճշմարտութիւնը դատաւորաց :

— Լաւ, տեարք, կ'ըսեմ ամեն բան : Կին մ'ունիմ զոր շատ կը սիրեմ, վասն զի իմ ընկերս է երեսունեւհինգ տարիներէ ի վեր : Իրարու քով ծերացանք, կը սիրեմ զնա նաեւ վասն զի բանը գործը գիտէ և տանտիկին է : Դժբաղդարար սոսկալի պակասութիւն մ'ունի, թուրքերան է : Ամեն միջոց ի գործ դրի որպէս զի հարկադրեմ զնա ըսելու, բայց չյաջողեցայ : Մեծ դժբաղդութիւն մը չէ՞ այս, պարոնայք :

Երէկ ուղեցի նոր փորձ մը փորձել : Այգիէն վերադարձած ժամանակս այնպէս ձե-

ւացուցի որ սիրտս շատ կոտրած է, և ինչպէս որ կ'սպասէի, սկսաւ ինձ հարցունքործ ընել: Վերջապէս երբ շատ աղաչեց, ըսի թէ՛ ծաշիկէն սպաննեցի և թաղուած էր այդ գիւղին մէջ:

Պարոնայք, նա կարող չէ եղած բռնել իւր լեղուն: Այս առտու ամեն բան պատմած է դրացի կնկանը, նա ալ ուրիշի մը ըսած է և այսպէս հետզհետէ... Եւ բոլոր քաղաքը յեղափոխութեան մէջ էր: Ոստիկանք եկան գիւ ձերբակալելու, ես ալ թող տուի որ ուղածնին ընեն, մտածելով որ աղէկ դաս մը տուած կ'ըլլամ կնկանս: Այս է բոլոր ճամարութիւնը, տեսարք: Ա՛հ, եթէ շատախօսին խելքը գլուխը գայ ասով...

Դատաւորք իրենք ալ չկարենալով ընդ երկար պահպանել իրենց ծանրութիւնը, մասնակցեցան ընդհանուր ծիծաղին. գինաթափ եղած էին:

— Լաբալիւթ, ըսաւ ընդհանուր դատախազը, որովհետեւ Պ. գիւղապետը լաւ վկայութիւններ տուաւ քու մասիդ, քեզ կը ներենք: Բայց եթէ ուրիշ անգամ ալ փորձ փորձես որ կնոջդ պակասութիւնը շտկես, այնպէս ըրէ որ նուազ ծայրայեղ միջոցներ ի գործ դնես: — Աղատ ես:

Այդ եղբորն անհատնութիւնները և շնորհակալութիւնները ըրաւ: Ամբոխը սկսաւ աղաղակել:

— Կեցցէ՛ ընդհանուր դատախազը, կեցցէ՛ չայր Լաբալիւթ:

Ամբոններն յեղ յեղուկ են նման ալեաց: Քիւնիի մարդիկ որ ժամ մ'առաջ կ'ողգէին իրենց ձեռքերովն կախել Լաբալիւթը, այժմ անոր ուղեկիցներն եղան ուրախալից աղաղակներ բառնալով:

Անոնց, որ եղածը դեռ չէին գիտեր, անոնց կը պատմէին այն աղբոր չարածձիւթութիւնը զոր հնարած էր չայր Լաբալիւթ իւր կինը թակարդի մէջ ձգելու համար, և միւս եւնոյն ժամանակ ալ բոլոր աշխարհ թակարդի մէջ ձգած էր:

Ամենէն աւելի չարածձիւները չվարանեցան յայտարարելու որ խնամքի պատմութիւնը ամենէն տարօրինակ էր և մինչեւ այն ատեն Քիւնիի գլխուն խաղցուած խաղերու լաւագոյնը:

Երբ եկան խմացնել տիկին Լաբալիւթի որ իւր ամուսինն աղատ էր, քիչ մնաց որ ուրախութենէն խենդենար:

Ընդ առաջ վաղեց իւր սիրելի էրկանը և հեծկլտանօք վզին փաթտուեցաւ:

— Ա՛խ, թէ որ գէթ այսուհետեւ չշատախօսէիր, ըսաւ էրիկը, շատ գոհ պիտի լինէի:

— Ա՛խ, աչքիս լոյսը, կը խոստանամ որ ալ բերանս չբանամ:

— Գուցէ մինչեւ այս երեկոյ, ըսաւ գլուխը երեքցնելով:

— Ա՛խ, լեղուդ գքեզ շատ չարչարելու էր որ այսպէս աւելի կ'ընտրէիր գիւ կախաղան զրիկը քան թէ լսել:

— Ներէ՛, ներէ՛, մարդս, իրաւ կը խոստանամ ալ շատ չխօսիլ:

— Լաւ, կը տեսնենք, ըսաւ չայր Լաբալիւթ:

Եւ վերստին գլուխը թոթուեց ի նշան տարակուսանաց:

Իրիկունը սեղանէ վերջ, տառնապետ Ուպինո կը խօսակցէր Լալուայի հետ:

— Քաղաքապահ, ըսաւ, այսօր քաղքիս մէջ մեծ աղմուկ ելաւ ոչինչ բանի մը համար: Քիչ մը շուտով փութացինք չայր Լաբալիւթը ձերբակալութեան վիճակի մէջ դնելու և ձի հեծնալով Մաքոն երթալ դատաւորին խմաց տալու: Հետեւաբար մենք շատ ամապարանօք գործեցինք:

Կը տեսնես, Լալուա, շարունակեց տառնապետը պէտքերը ոլորելով, պէտք էր որ մի եւնոյն ժամանակ մենք զգոյշ կենայինք չայր Լաբալիւթէ և ամեն ըսուածներուն աճապարանօք հաւատք չընծայէինք: Լաբալիւթ խորամանկին մէկն է, որ միշտ իւր չարածը ձիւթ ետից տակէն աղբոր խաղ մ'ունի դուրս հանելու:

Սակայն խեղճ մարդը ցաւակցութեան արժանի է որ իւր կինը խօսքի աղօրիք մ'է: Երիկը անոր ծանր խրատ մը տուաւ, և քաղաքապահ Լալուա, պիտի տեսնես որ չը պիտի ուղղուի:

— Ես իմ սեփական կարծիքս ունիմ: Կ'ըսեմ թէ երբ մարդ գժքաղութիւն ունի շատախօս կ'ին մ'ուսնենալու, միայն մէկ միջոց մը կայ դայն խօսելէ արգիլելու. այդ միջոցն է կնկանը լեղուն կտրել:

Քաղաքապահ Լալուան ձեռքը մորթակին տարաւ և ըսաւ.

— Տասնապետ, իրաւունք ունիս:

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՐ

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՌԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

3-9 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱՐՏԱՔԻՆ

Քոնկոյի Գեսպանախորհուրդն իւր առաջին նիստն ըրաւ նոյեմբեր 15ին ի Պերլին և Պիզմարք իշխանը նախագահ ընտրուեցաւ : Գերմանական լրագիրք առաջին նոտին վրայ խօսելով, կը հաստատեն թէ նշանակութեան արժանի ո՛ր և է միջադէպ տեղի չէ ունեցած : Հաճֆէլտ կոմսը պիտի նախագահէ Գեսպանախորհուրդն նիստերուն յանուն Պիզմարք իշխանին որ միայն ուզած էր անձամբ բանալ Գեսպանախորհուրդը : Տերութիւնք արդէն համաձայնած են ի Քոնկոյ նաւարկութեան բացարձակ ազատութեան սկզբան վրայ :

— Ռիւդէր հետեւեալ կարեւոր հեռագիրն հաղորդեց մեզ :

« Լնֆոն, 18 նոյ. — Թայիլ իւր այս աւուր թուով յօդուած մը կը հրատարակէ, ծանուցանելով թէ ընտրական բարենորոգման վրայ Երեսփոխանաց ժողովոյն և Լորտերու ժողովոյն միջեւ գծութեան մը վտանգն անհետ եղաւ : Լորտ Սալիսպլի և Սըր Սթաֆորտ Նորթքոք ընդունեցին Պ. Կլատըսդոնի առաջարկած իրաւախօսութիւնն, որով կարելի պիտի լինի հաշտարար կարգադրութիւն մը : Հետեւապէս, որոշուեցաւ որ Լորտերու ժողովն ընդունի Ընտրական Ծրագիրն ինչպէս քուէարկեցաւ Երեսփոխանաց ժողովէն : Իսկ կառավարութիւնն յանձն առաւ անմիջապէս բանակցութեան սկսիլ պահպանողական կուռակցութեան գլխաց հետ՝ երեսփոխանական աթոռոց վերաբաշխման վրայ, կամ նոյն խնդրոյ վրայ իւր ծրագիրն իսկ՝ ամբողջովին պատրաստած՝ ներկայացնել խորհրդարանին : Լոնտոնի բոլոր լրագիրք կը շնորհաւորեն Պ. Կլատըսդոն՝ խնդրոյն այս գոհացուցիչ լուծումը ձեռք բերելուն համար իւր չափաւոր և խոհեմ ընթացքով և քաղաքական իմաստութեամբ : »

— Տոնկոյայէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ զօրավար Լորտ Ուոլսլի նոյեմբեր 4

թուով Կորտոն զօրավարէն նամակ մը ըստացած է, ծանուցանող թէ զրկուած սուրհանդակներէ իմացած է անգլիական զօրաց յառաջխաղացութիւնն և կը յուսայ թէ կըրնայ դիմադրել մինչեւ անոնց հասնիլը : Կորտոն զօրավարը կը յաւելու թէ կը շարունակէ թշնամեաց յաղթել, երբ սորա կը ջանան խարդուով մերձենալ : Այս նամակ ապացոյց մը կը համարուի թէ խարդուով անկման վրայ տարածուած զրոյցք անհիմն են :

Տոնկոյայի կառավարչին կողմէ զրկուած սուրհանդակներ կը հաստատեն Սքուարդ գնդապետի սպանումը : Խարդումէն առնուած տեղեկութիւնք կը հաստատեն թէ Մէհտին մէկ աւուր ճամբայ հեռի է այդ քաղաքէն : — Եղիպտական գաւառաց մէջ յետեւալ տրոց հաւաքումը կը կատարուի մեծ խտութեամբ : — Անգլիական բանակին դէպ ի Նեղոս յառաջխաղացութիւնը մեծամեծ գծաւարութեանց կը հանդիպի միշտ : Պաշար բեռցած մի քանի փոքր նաւեր ընկղմեցան գետին մէջ :

— Եւրոպական լրագիրք, Թէհրանէն նոյեմբեր 11 թուով հետեւեալ հեռագիրը կը հրատարակեն :

« Պարսկաստանի Գարատաղ գաւառին մէջ ապստամբութիւն մ'եղաւ եւ ապստամբ սպանեցին գաւառին կառավարիչն և աւարառութիւն գործեցին քանի մը հայկական զիւղերու մէջ : Այս գիւղորէից բնակիչներէն շատեր ուսական հողն ապաստանեցան : Պարսկաստանի գահաժառանգ իշխան Մուղաֆէր Էտտին, որ Ատրպատականի կառավարիչ է, Գավրէթէ Գարատաղ գնաց ամուսն Յին, բարեկարգութիւնը վերահաստատելու : »

Շաբաթ մ'առաջ Եւրոպական լրագիրք հրատարակեցին Տիփլիսէ քաղաւած հեռագիր մը, որ ասպատակաց խմբի մը Գարապաղի գաւառին մէջ հայկական զիւղերու վրայ ի գործ դրած չարագործութիւնները կը պատմէր :

Գարապաղ ռուսական գաւառ մ'է Կաւկասիոյ մէջ : Գլխաւոր քաղաքն է Շուշի : Այս գաւառին դիմաց, ռուսոյ — պարսկական սահմանադրութիւն պարսկական կողմին վրայ է Գարատաղի գաւառն, ուր կը բնակին պարսկաց իշխանութեան ներքեւ մի քանի հազար Հայք : Կերեւի թէ այս երկու

գաւառաց մէջ միանգամայն ծանր խռովութիւն մը ծագած է, և Հայ դիւղացիք են տուժողը: Թէեւ ապստամբաց ազգութիւնը չի ծանուցաներ, բայց ասոնք Պարսիկներ պէտք է լինին կամ քուրդեր:

— Լոնտրայի Լորտ-Քաղաքապետի տարեկան խնջոյքին մէջ Լորտ Կրանվիլ ճառ մը խօսելով օրուան խնդրոց վրայ, ի մէջ այլոց յայտարարած է թէ Անգլիա կը փափաքի որ Ֆրանսայի և Զինատանի միջեւ ծագած պատերազմն եւ թշնամութիւնը դադրին եւ թէ պատրաստ է իւր միջնորդութիւն առաջարկել անոնց, երբ ուզեն: Ապա խօսելով Նգիպտոսի խնդրոյն վրայ, յոյս յայտնած է թէ Ուոլլի զօրավարը պիտի յաջողի ազդատել զիւր փառաւոր զինակից, Կորտոն զօրավարն, եւ կարելի պիտի լինի կանոնաւոր կառավարութիւն մը թողուլ Սուտանի մէջ:

Լորտ Կրանվիլ խօսելով նաեւ Քոնկոյի Դեսպանախորհրդոյն վրայ, կրկնեց Պ. Կլաւրսդոնի յայտարարութիւնը թէ Անգլիա բնաւ չի նախանձիր Գերմանիոյ գաղթային ձեռնարկութեանց, մանաւանդ երբ կը տեսնէ թէ Գերմանիա կընդունի վաճառականութեան և նաւարկութեանց ազատութեան սկզբունքն, որոց շնորհիւ Անգլիա այժմ իւր ձեռաց մէջ ունի աշխարհի գեղեցկագոյն գաղթականութիւնը:

— Միացեալ Նահանգաց նախագահական ընտրութեանց արդեան վրայ հրատարակեալ պաշտօնական տեղեկութիւնը 1,078 ձայնի մեծամասնութիւն մը կուտան Քլիվլենտի: Պ. Պլէն կընդունի իւր պարտութիւն եւ կը ծանուցանէ թէ քննութիւն չպիտի պահանջէ ընտրական կարծեցեալ զեղծմանց վրայ: Պ. Պլէնի այս յայտարարութիւն մեծապէս նըպաստեց մտքերն հանդարտելու:

— Թայմզ լրագրոյ աշխարհածանօթ թըղթակից Պ. Մաքէնզի Ուալլաս՝ փոխարքայ Լորտ Տըֆրինի հետ Հնդկաստան կերթայ իբր քաղաքական քարտուղար Ն. Վսեմութեան:

Ն Ե Ր Ք Ի Ն

Ռուսիոյ կայսեր հօրեղբայր՝ Միքայէլ Մեծ Դուքսի որդի Միխայիլովիչ Մեծ Դուքսն այս երկուշաբթի Պոլիս եկաւ արքունական էրէքլէք շոգենաւով: Ռուսական դեսպանն և պալատականք ընդ առաջ գնացին Նորին Բարձրութեան զոր Երլտըզ առաջնորդեցին: Վեհ. Սուլթանն իւր կայսերական հիւրին սիրալիր ունկնդրութիւն մը շնորհեց որբւմ ներկայ էին դեսպանն և նախարարք: Իրիկունը պալատան մէջ փառաւոր սեղան մը տրուեցաւ: Յաջորդ առաւօտուն Դուքսը՝ Պ. Նէլիտօֆի և կայսերական թիկնապահապետ Ահմէտ փաշայի ընկերակցութեամբ Պոլսոյ պատմական գլխաւոր վայրերն այցելեց եւ ապա Պալատը վերադառնալով, հրաժեշտ առաւ Վեհ. Սուլթանէն: Ն. Կ. Վեհափառութիւն բարեհաճեցաւ Օսմանիէի ականաւորապատուանշանը շնորհել Դուքսին:

Ն. Բարձրութիւն երեքշաբթի երեկոյ մեկնեցաւ մայրաքաղաքէս, Օտեսայի ճանբով Բեդրսպուրկ ուղեւորելու համար:

— Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ առաջին կարգի Օսմանիէ պատուանշան շնորհել դատական նախարարութեան խորհրդական Վըսեմ. Վահան էֆէնտիի:

— Կայսերական անձնական գանձուն նախարար Վսեմ. Յակոբ փաշա անցեալ տարի մի քանի հազար վարդի տունկ բերել տալով Գըզանլըզէն, Հէքիմ-Պաշի ագարակին մէջ տնկել տուած էր: Այս փորձը կատարելապէս յաջողած եւ առատ վարդ հասած լինելով, կըսուի թէ Վսեմ. նախարարը մտադիր է արքունական բոլոր ագարակաց մէջ տարածել սոյն մշակութիւնը:

— Կիմանամք թէ Կ. Պոլսոյ Ֆրանսական դեսպան Նոյալ Մարքիզն որ անցեալ շաբթու Բարիզ ուղեւորեցաւ ընտանեօք, ոչ եւս պիտի վերադառնայ եւ նորա յաջորդ պիտի ընտրուի Մատրիտի այժմեան դեսպան Պ. Տէ Միչէլ:

— Բ. Դուռը բանակցութեան մէջ է գերմանացի դրամատեարց ներկայացուցիչ Պ. Պլէյսրօտէրի և Բարիզի Օսմանեան Պանքայի տնօրէն Պ. Պէրֆէի հետ, երկաթուղեաց միացման գծերու շինութեան համար: Կըս.

ուի իսկ թէ խնդիրը չատ յառաջացած է և Պ. Պէրժէ՝ որ Բարիզ դնաց, հետը տարած է դաշնագրի մը ծրագիրն : Իսկ Նէօլօղոս կիմանայ թէ Կ. Պոլսոյ քարափանց շինութեան կը վերաբերի այդ ծրագիր :

— Լոնտայի Սթարթալի անուն յունական մեծ գրամատունն իւր վճարքը դադարեցուց 800,000 անգլիական ոսկւոյ բացով մը : Պոլսոյ վաճառատուններէն մին (Տ. Բ. և ընկ.) 30 հազար ոսկի ունի այդ գումարին մէջ : Պոլսոյ և Իզմիրի այլ և այլ գրամատունք ալ բաւական վճատուած են այս պատճառաւ :

— Անցեալ չարթու Հալէպի մէջ սարսափելի ողորումներ պատահելով, քարուքանդ ըրեր են դաւառին հիւսիսային արեւմտեան մասն, և Աֆրին գետին վրայ շինուած նոր կամուրջը փլեր է կէսէն աւելի : Բաղում անձինք եւ արջառք կեանքերնին կորուսեր են եւ հազարաւոր ծառեր արմատախիլ եղեր են հեղեղաց սաստկութենէն :

— Անգլիոյ երեսփոխանաց ժողովոյ նոյ. 15ի նստին մէջ արտաքին գործոց նախարարի խորհրդական Լորտ Ֆիլ Մորիս յայտարարեւ է թէ՝ Բրիտանական կառավարութիւնը դիտողութիւն ըրեր է առ Օսմանեան կառավարութիւնն Փոքր Ասիոյ մէջ ներմուծելի բարենորոգմանց համար, եւ թէ Կ. Պոլսոյ անգլիական դեսպանն այս նկատմամբ նոր հրահանգներ պիտի ստանայ ի մօտոյ :

— Կըսուի թէ մէկ միլիոն զորուի արժուութեամբ կեղծ գրոշմութիւն զտնուեր են Պոլսոյ հրապարակին վրայ :

— Արթական սաշտօնատան մէջ բարձրագոյն յանձնաժողով մը կազմուած է կըրթական բարենորոգմանց գործով զբաղելու պաշտօնով :

Մ. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.

Պատրիարքական ընտրութեան նախնական գործողութիւնք սկսան չարթուս ակիզքը : Պատրիարքական Դեր. Փոխանորդ Հայրն ըստ Սահմանադրութեան պատրաստած լինելով Թուրքիոյ բոլոր եպիսկոպոսաց ցանկը, մատոյց զայն Կրօնական Ժողովոյ որ երկու շաբթի օրը գումարեցաւ ընդ ամենապետութեամբ Դեր. Տ. Խորէն Նար-սէյ Արքեպիսկոպոսի : Ժողովը բաւական ժամանակ

զբաղեցաւ այդ ցուցակին մէջ նշանակեալ Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց եկեղեցական և ազգային կենաց քննութեամբ և որոշեց որ Եկեղեցական Համագումար Ժողով գումարի յառաջիկայ երկու շաբթի :

Կըսուի թէ Համագումար Ժողովոյ մէջ պիտի առաջարկուի որ այն եւս Ազգային Ժողովոյ նման միամետայ սուգ առնուի :

— Խառն Ժողովն իւր վերջին նստին մէջ առաջարկութեամբ Կրօնական Ժողովականաց որոշեց որ հանգուցեալ Ս. Պատրիարք Հօր անուան յիշատակութիւնն ըստ սովորութեան շարունակուի մինչեւ ցընարութիւն Պատրիարքի :

— Հոգեւոյ Տ. Ներսէս Պատրիարքի կըտակած եւ հրաժարագրոյն մէջ առ Վեհ. Սուլթանն և Օսմանեան կառավարութիւնն յայտնուած երախտագիտական զգացումները Պատրիարքարանի կողմէ ներկայացուեցան առ Բարձր. Մեծ Եպարդոսն, Ն. Վեհափառութեան մատուցուելու համար : Բարձր. Սայիտ փաշա պատասխանադրով մը ծանուցած է Պատրիարքարանի թէ Թագրիրն հաղորդած է Ն. Կ. Վեհափառութեան, եւ թէ՝ ցաւալի է կորուստն Տ. Ներսէս Ս. Պատրիարքի, որ գիտցած էր ըմբռնել Տէրութեան եւ Ազգին կապակցութեան իսկութիւնն ինչպէս կը հաստատուի նաեւ իւր վերջին կտակած եւ թղթէն : Սոյն գիրը կարգացուեցաւ Բաղաքական Ժողովոյ վերջին նստին մէջ, յորում ի՛նչ ի՛նչ տնօրինութիւններ եղան որպէս զի Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ գործողութիւնք կատարուին ըստ հնաւանդ կանոնաց և իրաւանց Ազգին :

— Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր վախճանման համար ցաւակցութեան նամակը և հեռագիրը հասան հետզհետէ Եջմիածնայ Ս. Սինհօդէն, Սոյ Ս. կաթողիկոսէն, գաւառաց Դեր. Առաջնորդներէն Տիգրիսի, Մոսկուայի, Ասորականի, Ալեքսանդրիոյի, Նախիջեւանի և այլ բազում քաղաքաց ազգայիններէն :

Անցեալ կիրակի մայրաքաղաքիւ բոլոր եկեղեցեաց մէջ հոգեհանդստեան Պատարագ և սաշտօն կատարուեցան :

— Տպագրական տեսչութիւնն հայերէն լրագրաց միջեւ Պատրիարքութեան և կրօնի խնդրոց վերաբերեալ հրատարակութիւններն արդիւնք Եպարքոսական հրամանաւ :

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՇԱՎԷՆԻ

Պ. Շավեն, որ Վեհ. Սուլթանին պալատան մատակարարն է, պատիւ ունի ծանուցանել իւր բազմաթիւ յաճախորդաց թէ իւր նոր վաճառատանց բացումը որոշուած է

1224 ՆՈՅԵՄԲԵՐ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅ

ՇԱՎԷՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ կը հրաւիրէ իւր յարգող յաճախորդները գալ այցելել արուեստական գործոց և փարիզեան վերջին արտադրութեանց իւր ճոխադարձ ցուցահանդէսը:

Վաճառատունը փոխադրուած է Ի Բերա, Սէրքէ տ'Օրիան

Արհեստագործական շուկայի մոտ, Երեւան

1882 ԳԻՍԱԻՈՐԸ



Այս հռչակաւոր վաճառքի տարի թուով իւր ամենաբնական տեսակէն է, կը յանձնարարուի ծխողաց: Մայրաքաղաքի քաղաքական վարժարանը փորձելով հաստատած է թէ և ոչ մէկ թունաւոր բուսական նիւթ

կը պարունակէ: Ընդհանուր շտեմարանն է՝ բոլոր ճաշկատան համար Ղալաթիա, Մոմիսանէ փողոց Սիթէ Փրանսէզ, 82 թիւ, Պ. Չաքարիա Մարանկիդէսի վաճառատունը:

Կը գտնուի նաև Կ. Պոլսոյ և Ղալաթիոյ բոլոր ծխողականաց քով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻՍՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՅ

—o—

Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵՁՈՒԻ

312 հրահանգք լեզուի եւ մտածութեան

Երկրորդ Տպագրութիւն

Դին 6 դահեկան արձաթ

Շատ գնողներու համար մասնաւոր զեղչ կը լինի:

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով: Կեդրոնատեղին է Հայոց Միաց. եւ Ընկերութեանց գրասենեակն, Կալթա, Կէօչէ — օղլու խան, թիւ 12:

—o—

Ծանօթ. — Հայոց Միաց. Ընկերութեանց կնիքը չկրող օրինակներն անվաւեր են:

ՓԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԾԵՆԵԱԿ

Մայրաքաղաքիս Հայ փաստաբաններէն Նազարէթ Էֆէնտի Խաչէրեան ընկերակցած է Յովհաննէս Էֆէնտի Կիւլպէկեանի, որ Փրանսայի Էքս քաղաքի իրաւաբանական համալսարանի մէջ իւր ուսմունքը փայլուն յաջողութեամբ աւարտած և Լէսանսէ առ օրէնսփայլաբան ստանալով, այս անգամ վերադարձած է:

Խաչէրեան Էֆէնտի որ Պրուսիոյ համալսարանէն վկայեալ է, և Տօքէօ առ Տրուսի տիտղոսն ունի, անդէն ծանօթ է մեզ՝ դատական աշխարհի մէջ ունեցած համբաւով, և Կ. Պոլսոյ իրաւաբանական վարժարանին մէջ պատժական օրինաց դասախօսութեամբն:

Դոհ պիտի լինին ամեն անոնք, որք պիտի դիմեն յիշեալ Էֆէնտիներու գրասենեակն՝ որ կը գտնուի Ղալաթիա, Գալաֆեան խան, թիւ 9:

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ստորագրեալս պատիւ ունի ծանուցանել Արգոյ Հասարակութեան թէ, յառաջիկայ 1885 տարւոյ Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին սեփականեալ ընդարձակ օրացոյցին մէջ պիտի զետեղուին ամէն տեսակ ազգեր իբր յաւելուած :

Ներկայ ծանուցմամբ կը հրաւիրուին վաճառականք, գործարանատեսարք, սեղանաւորք, արհեստաւորք, դեղագործք, փաստաբանք, այլ և այլ ընկերութեանց Կ. Պօլսոյ գործակալք, զանազան հաստատութեանց վարիչք և առւտրական ամէն ճիւղերու վերաբերեալ անձինք, որ կը փափաքին իւրեանց գործոց վրայ ազդարարութիւն ընել յիշեալ ընդարձակ օրացոյցին մէջ՝ դիմել առ

Գ. ՊԱՂՏԱՏՆԵԱՆ

Տնօրէն Արամեան տպարանի,
Յակոբեան խան, թիւ 13

Ազդարարութիւնք պիտի ընդունուին մինչեւ յառաջիկայ նոյեմբեր 10 :

Պայմանք գոհացուցիչ են :

Օ ԳԱՄԷԼԻԱ

Վաճառատունը պատիւ ունի ծանուցանել հաստատութեան թէ իւր փոխադրութեան առթիւ ի

194, ԲԵՐԱՅԻ ՄԵԾ ՓՈՂՈՅՆ

Կալամա-Սէրայի դիմաց

Ի վաճառ. կը հանէ ՅՈՅԺ ԱՃԱՆ ԳՆՈՎ իւր հաստատութեան մէջ գտնուած բոլոր ապրանքներն, որոց միացած են դեռ նոր հասած ապրանքներ, ամենքն ալ վերջին նորաձեւութենէն, և Փարիզի առաջին գործարաններէն ելած :

Այս ԱՐՏԱՍՈՎՈՐ ՎԱՃԱՌՈՒՄԸ որ տեղի պիտի ունենայ ԳԱՄԷԼԻԱՅԻ վաճառատեղին, Հաճութեան անցք, թիւ 8, և որ գեղեցիկ առիթ մը կը մատակարարէ, պիտի սկսի նոյեմբեր շին, և միայն ՄԷԿ ԱՄԻՍ պիտի տեսնենք, որմէ յետոյ վաճառատունը վերջնապէս պիտի փոխադրուի իւր նոր տեղին, վերոյիշեալ հասցէով

Օ ԳԱՄԷԼԻԱ

ՊԱՐԶ ՕՐԱՅՈՅՆ

1885 ՏԱՐԻՈՅ

Սեփականութիւն

Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ
Գին ՄԷԿ դահեկան

Կը գտնուի ի Մեծ Նոր խան, միջնայարկ թիւ 49, Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը և բոլոր Հայ գրավաճառաց քով :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԼԵ ԼՐԱԳՐՈՅ